



35(392)
15.12.2014

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գլխավոր, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍԱՐԱՐ

Լսարար

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ՊԱՅՔԱՐԻ ՈՒ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԽՏԱՅՈՒՄՆ Է

1948 թվականի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, իսկ արդեն 1950 թվականից Գլխավոր ասամբլեայի առաջարկությամբ այդ օրը նշվում է որպես Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օր:

Ժողովրդավարության ուղին հաստատականորեն բռնած Արցախում, անշուշտ, այն նույնպես հասարակական-քաղաքական նշանակությամբ շեշտվում է: Միևնույն ժամանակ, դեկտեմբերի 10-ը արցախցիների համար ընդգծվում է երկու կարևոր իրադարձություններով՝ ԼՂՀ անկախության հանրաքվեով և Սահմանադրության ընդունմամբ:

Արդյո՞ք պատահական համընկնում է սա. կարծում ենք՝ ոչ: Եթե մտովի վերադառնանք իննսունականների սկզբի դժնդակ օրերը, երբ Արցախը խուլ պաշարման մեջ էր, և Մոսկվայի կենտրոնական ու Բաքվի հանրապետական իշխանությունների կողմից փորձ էր արվում կոտրել արցախցիների ազատատենչ ոգին, պետք էր համաժողովրդական հանրաքվեով ամրագրել սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների կողմից համատեղ ընդունված անկախության մասին Հռչակագիրը:

Հանրաքվեն դեկտեմբերի 10-ին կազմակերպելով, այդ օրվա միջազգային նշանակությամբ, Արցախի ժողովուրդը ցույց տվեց աշխարհին, որ իր կամարտահայտությունը հիմնված է բացառապես համանարողկային արժեքների վրա: Հատկանշական է, որ քվեարկությանը հետևելու էին եկել միջազգային տարբեր կառույցներից, որոնց գնահատականը միանշանակ դրական էր: Ըստ էության, արցախյան հանրաքվեն հետխորհրդային տարածքում առաջին քաղաքական միջոցառումն էր, որով ժողովուրդը կարողացավ քվեարկության միջոցով և միջազգային ընդունելի չափորոշիչներով արտահայտել իր ազատ կամքը: Բնականաբար, Բաքուն չընդունեց համաժողովրդական քվեարկության արդյունքները և Արցախի ժողովրդի այս քաղաքակիրթ քայլին պատասխանեց նրա դեմ պատերազմ սանձազերծելով:

Հետագայում՝ Ադրբեջանին հրադադարի պարտադրելուց հետո, նորաստեղծ հայկական հանրապետությունը ձեռնամուխ եղավ պետականաշինության գործընթացին: Երկրի հիմնական օրենքի՝ Սահմանադրության ընդունումը ևս անհրաժեշտաբար եղավ. 2006 թվականի դեկտեմբերի 10-ին դարձյալ հանրաքվեով Արցախի ժողովուրդն «այո» ասաց իր Սահմանադրությանը: Ընդունվեց մի կարևոր փաստաթուղթ, որով ավելի ընդգծվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնիշխանության փաստը: Իբրև իրավական պետություն՝ ԼՂՀ-ում այսօր առկա են օրենքի գերակայության, սոցիալական արդարության, անձի և քաղաքացու ազատությունների ու իրավունքների պահպանման բոլոր երաշխիքները: Եվ դա է զարգացման ու բարգավաճման տանող անխտոր ճանապարհը:

ԼՂՀ Սահմանադրությունը կարելի է համարել Արցախի ժողովրդի դարավոր իղձերի, նրա նվիրական պայքարի ու նվաճումների խտացումը: Հպարտանանք այդ նվաճումներով ու դեկտեմբերի 10-ի խորհրդով ամրապինդ՝ շարունակեք շենսգնել մեր սիրելի Արցախը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՄԱՔԱՊԱՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԱՅՆԱՐՈՒՄ ՃԱՆԱԳՐԱՐԿԻ ՔԱՊՈՐԴ ԴԱՐ



Արցախյան դպրոցները դարձրել պատմություն ունեն: Քիչ չեն այն կրթօջախները, որոնք հարյուրամյակի սահմանն են հատել: Դրանց կողքին Երևանի պետական համալսարանին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը, որն այս օրերին տոնակատարեց իր հիմնադրման 25-ամյակը, իհարկե, բավականին երիտասարդ է, սակայն արդեն իսկ իր արժանի տեղն ունի Արցախի կրթական համակարգում: Եվ դա պայմանավորված չէ միայն նրա՝ որպես մասնագիտացված դպրոցի բնույթով: Ցանկացած կրթօջախ սեփական պատմությունը կերտում է նախ և առաջ իր բովանդակությամբ, թողարկած սերունդով: Այդ իմաստով Ստեփանակերտի ֆիզմաթը, չնայած երիտասարդ տարիքին, հարուստ կենսագրություն ունի:

Դեկտեմբերի 5-ին այստեղ տեղի ունեցած հանդիսությունը քառորդարյան կրթօջախի՝ գիտության լայնահուն անցնելիք ճանապարհի առաջին կարևոր հանգրվանն էր խորհրդանշում:

Կրթօջախի հյուրընկալ հարկի ներքո հավաքվել էին պետական այրեր, տարբեր բնագավառների ներկայացուցիչներ, նրանք, ովքեր այս կամ այն ձևով առնչվել են ֆիզմաթ դպրոցին: Հարազատ դպրոցի հոբելյանական առաջին մեծ տոնակատարությունն էր, որը բոլորին անկեղծ հարգանքի, սիրո ու երախտագիտության զգացումով մեկտեղել էր դպրոցի ջերմ կամարների տակ: Նախասրահում տեղադրված վահանակներին կրթօջախի անցած ուղին է՝ լուսանկարներով: Հպարտության և հուշերի ուրախ և թախծոտ զգացումները միահյուսվել էին: Ներկաները ակամայից առաջինը մոտենում են այն վահանակին, որից նայում են հավերժի ճամփորդ դարձած մաթեմատիկայի ուսուցիչ Սամվել Սաֆարյանը, շրջանավարտներ Դավիթ Հակոբյանը, Արթուր Բաբայանը: Օաղիկներ և խոնարհում՝ նրանց հիշատակին: Իսկ ահա «Կյանքն այն օրերը չեն, որ անցել են, այլ նրանք, որ հիշվում են» և «Դպրոցական 25-ամյա հեթիաթ» վերտառությամբ լուսանկարային վահանակները, ինչպես նաև բոլոր տարիների շրջանավարտների դասարանական խմբակարգները արդեն իսկ պատկերացում են տալիս

կրթօջախի անցած հետաքրքիր ճանապարհի մասին, որը քիչ հետո պետք է ներկայացվեր տեսաֆիլմով՝ դպրոցի պատմության ուսուցչուհի Հասմիկ Մկրտումյանի մեկնաբանությամբ, ինչպես նաև հնչելու հանդիսությունը վարող Սուսաննա Մկրտչյանի և Ելույթ ունեցողների խոսքում:

Դպրոցն Արցախյան շարժման ծնունդ է, 1988թ. սկսված ազգային մեծ զարթոնքի գաղափարական մի հաղթանակ է Արցախը մայր Հայաստանին կապելու պայքարի ճակատում: Ազգային գաղափարներով տոգորված յուրաքանչյուր ոք ցանկանում էր ինչ-որ բան անել Արցախի համար, և Երևանի ֆիզմաթ մայր դպրոցի տնօրեն, ծնունդով արցախցի Գեորգի Առուշանյանի ու ԼՂՀ մարզ-ժողկրթքաժվար Վիգեն Հայրապետյանի նախաձեռնությունը սիրով վավերացրեց ՀՀ լուսավորության նախարար Սեմյոն Հախումյանը: 1989-1990 ուսումնական տարում Ստեփանակերտում սկսեց գործել Երևանի ֆիզմաթ դպրոցի մասնաճյուղը, որի նպատակն էր ֆիզիկամաթեմատիկական առարկաների նկատմամբ սեր ու հակումներ ունեցող երեխաների համար

մասնաճյուղի առաջին սաները: Կազմակերպչական բոլոր աշխատանքները դրված էին տնօրենի պաշտոնը ստանձնած Գեորգի Սահակյանի վրա, որը, թողնելով Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը, լծվեց Արցախում իր տեսակի մեջ առաջին դպրոցի ձևավորմանը: Դժվարությունները բազում էին՝ շենքային, գույքային, բայց ամենակարևորը կադրերի խնդիրն էր: Ինչպես խոստովանում է առաջին տնօրենը, իրեն օգնեց այն համազանցը, որ այդ ժամանակ դասավանդելով մանկավարժական ինստիտուտում՝ շատ լավ գիտեր, թե շրջանավարտներից ովքեր կարող էին դառնալ մանկավարժ, և նրանց բերեց ֆիզմաթ դպրոց: Ոչ պակաս էին շենքային խնդիրները. դպրոցը ստիպված էր մի քանի անգամ տեղը փոխել: 1989թ. սեպտեմբերի 1-ին ֆիզմաթ դպրոցի մասնաճյուղը գտնվում էր նախկին Տիմիրյակի փողոցի մարզական շենքում (ներկայիս վերականգնողական կենտրոն): Նրա հաջորդ հասցեներն էին՝ ներկայիս ազրարային համալսարանի շենք, Խ. Աբովյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի նախկին շենքից մնացած շինություն



րինեցին գեներով՝ մեկնելով ռազմի դաշտ: Պատերազմի տարիներին չընդհատվեցին դպրոցի պարապմունքները: Ձիսադադարից հետո վերադարձան ուսուցիչները՝ նորից համալրելով մանկավարժական կոլեկտիվը: Նրանցից էր ֆիզիկայի ուսուցիչ Վիտալի Գաբրիելյանը, որ հետո ստանձնեց մասնաճյուղի ղեկավարի պաշտոնը: Դպրոցը ստիպված էր հաղթահարել տնտեսական շատ դժվարություններ: Ուսուցիչները հիշում են այն օրերը, երբ դասազրբերի հետ աշակերտները դպրոց էին բերում մեկական փայտ, որը հերիքում էր ընդամենը 2-3 դասաժամ: Վաղուց հանգած վառարանների շուրջ ուսումնատենչ երեխաները շարունակում էին շատ սպասված պարապմունքները: Այդ տարիներին դպրոցին ձեռք մեկնեցին ԱրՊՀ մի շարք դասախոսներ, ճանաչված մանկավարժներ: Ավաղ, նրանցից շատ-շատերն այսօր մեզ հետ չեն: Մյուսներն անցել են վաստակած հանգստի՝ իրենց մանկավարժական ծիրքը, փորձը փոխանցելով երիտասարդ սերնդին, ուղեցույց հանդիսանալով նրանց համար:

1999-2014 թվականները դպրոցի վերածննդի տարիներ կարելի է համարել: 1999թ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից արգենտինահայ համայնքի միջոցների հաշվին կառուցվեց ֆիզմաթ դպրոցի ներկայիս շենքը՝ բոլոր հարմարություններով: Այն ներառում է ուսումնական մասնաշենքը՝ լուսավոր ու հարմարավետ դասասենյակներով, մարզադահլիճ, գրադարան, ֆիզիկայի ու քիմիայի կաբրատորիաներ, ժամանակակից համակարգչային կաբեներ:

Արդեն 5-րդ ուսումնական տարին է՝ դպրոցը ղեկավարում է մաթեմատիկայի ճանաչված ուսուցչուհի, վերջերս ԼՂՀ վաստակավոր մանկավարժի պատվով կոչման արժանացած Սուսաննա Ներսեսյանը: Կարճ ժամանակահատվածում նրան հաջողվել է մանկավարժական կոլեկտիվին համախմբել մեկ գաղափարի շուրջ՝ աշխատել բոլորանվեր՝ կրթական բարեփոխումների ծրագրին նոր որակ հաղորդելու նպատակով: Նա գոհունակությամբ նշեց, որ կոլեկտիվի նվիրական աշխատանքի շնորհիվ դպրոցն այս վերջին տարիներին հասել է շրջափելի հաջողությունների:



կազմակերպել պետական (այժմյան Ազգային ժողովի շենքի տեղը), մինչև որ ունեցավ իր մշտական վայրը:

Արցախյան պատերազմի տարիները, ինչպես բոլոր կրթօջախների, այնպես էլ ֆիզմաթի համար մաթառունների շրջան էին: Մեր մյուս կրթօջախների պես այստեղ էլ տղամարդ ուսուցիչները դասամատյանը փոխա-

ՖԻԶՄԱԹ-25

ՄԱՔԱՌԱՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԱՅՆԱԿՈՒՆ ԾԱՆԱԴԱՐԻ ԲԱՊՈՐՏ ԴԱՐ

1 Այդ են ասում դպրոցականների առարկայական օլիմպիադաներում, տարաբնույթ մրցույթներում ունեցած հաջողությունները, նաև հասարակության լայն շրջանակների կարծիքը դպրոցի մասին: Խոսելով ձեռքբերումների մասին՝ տունական օրը տնօրենը չըջանցեց հիմնախնդիրները, բացթողումները, չլուծված խնդիրները: Անելիքներ շատ կան: «Այն, ինչին հասել ենք, կարելի է որակել ընդամենը մի փոքրիկ տեղաշարժ: Կարծում եմ՝ մեր մանկավարժական կոլեկտիվն ունի բոլոր նախադրյալները ձեռքբերումներն ամրապնդելու, բազմապատկելու, նոր հաջողություններ արձանագրելու համար: Լինելով ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոցի մասնաճյուղը, մենք իրավունք չունենք հապաղելու, ես մնալու դարի մարտահրավերներից: Մայր դպրոցի աշակերտների փայլուն ելույթները, հաջողությունները միջազգային օլիմպիադաներում ոգևորում են մեզ՝ դառնալով մեզ համար ուղեցույց: Յուրաքանչյուր, մեր պարտքն է՝ եթե չկարողանանք հասնել, գոնե մոտենանք նրանք», -ասաց Ս. Ներսեսյանը՝ բարձրաձայնելով տնօրենի իր երազանքը՝ միջազգային օլիմպիադաներում արցախցի դպրոցական տեսնել: Ահա այն գերխնդիրը, ինչին պետք է նպատակաուղղվի դպրոցի ողջ ներուժը: Մեկ հարցի վրա էլ տնօրենը կանգ առավ. դպրոցի շենքը կառուցվել է շահագործման է հանձնվել 15 տարի առաջ, սակայն մինչև օրս հիմնամորոգման չի ենթարկվել, ինչի կարիքը խիստ զգացվում է, թեպետ առաջին հայացքից դա այդքան էլ նկատելի չէ: Զարմանալի է, բայց փաստ, որ պարավունքներն անց են կացվում բեռոնե հատակով, լինելուսնաձածկ դասասենյակներում: Դպրոցի նյութատեխնիկական բազան վերջին տարիներին որոշ չափով հարստացվել է, բայց այն ունի համալրման, թարմացման կարիք: Տնօրենը երախտագիտություն հայտնեց ԼՂՎ վարչապետին, որ խոստացել է հաջորդ ֆինանսական տարում իրականացնել շենքի ճակատային մասի վերանորոգման աշխատանքները, ԼՂՎ կրթության և գիտության նախարար Ա. Ասրյանին՝ դպրոցին երկու համակարգչային դասարան նվիրելու և ամենօրյա ուշադրության համար, ԼՂՎ երկրորդ նախագահ, դպրոցի ծնող Ա. Ղուկասյանին, որի անձնական ֆինանսական օգնության շնորհիվ նորացվել են դպրոցի 1-3-րդ հարկերի վթարային վիճակում գտնվող պատշգամբները, մայր դպրոցի տնօրեն Զայկազ Նավասարդյանին, որի անձնօրյա ուշադրության և հոգածության կենտրոնում է Ստեփանակերտի ֆիզմաթը, նախկին տնօրեններին և մանկավարժական կոլեկտիվին՝ իրենց առաքելությունը պատվով կատարելու համար: Տնօրենն իր երախտագիտությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր ինչ-որ չափով իրենց ներդրումն են ունեցել դպրոցի կայացման ու զարգացման ճանապարհին՝ կոչ անելով բոլոր շրջանավարտներին՝ չնոռանալ հարգատ կրթօջախը և հնարավորության սահմաններում օգտակար լինել:

Գյուլի տնտեսության տարբեր բնագավառների առաջավորներ են: Դպրոցի առաջին և մեղակալի շրջանավարտներից է ԼՂՎ վարչապետ Արայիկ Զարուբյանը: Նա հպարտությամբ նշեց, որ ֆիզմաթի շրջանավարտները բարձր պաշտոններ են զբաղեցնում տնտեսության մեջ, բազմաթիվ ու գինվորական կյանքում, և դա առաջին հերթին արդյունք է դպրոցի ուսուցիչների կատարած աշխատանքի, որի համար շրջանավարտների անունից երախտագիտություն հայտնեց՝ նշելով նաև, որ դպրոցը շատ մեծ դեր է կատարել իր կյանքում, հետագա տարիների առաջնադասման գործում պարտական է դպրոցում ստացած գիտելիքներին և վստահություն հայտնեց, որ այսօրվա շրջանավարտներն էլ երախտագիտությամբ են հիշելու այստեղ անցկացրած տարիները: Նա հորդորեց դպրոցի տնօրենությանը, մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներին՝ շարունակել առաջընթացը, հասնել նորանոր հա-

Զայկազ Նավասարդյանը՝ ընդգծելով, որ երրորդ տնօրենի օրոք դպրոցը պատանությունից անցել է հասունության և բնակիչի զարգացման փուլ: Նա ԶՂ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի կողմից հանձնեց պատվոգիր դպրոցի մանկավարժական կոլեկտիվին, իսկ իր կողմից՝ էլեկտրոնային գրատախտակ՝ դպրոցին և պատվոգրեր՝ մի խումբ ուսուցիչներին: ԼՂՎ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը, շնորհավորելով դպրոցի հոբելյանը, ասաց, որ այն տոն է ամբողջ կրթական համակարգի համար, քանզի նրա հաջողությունները բոլորին են: Նա առանձնապես ընդգծեց դպրոցի վերջին երեք տարվա ձեռքբերումներն առարկայական օլիմպիադաներում և Երևանի ֆիզմաթ դպրոցի տնօրենի ուշադրությունը հրավիրեց ավելի նպաստավոր միջավայր ստեղծելու՝ արցախյան հողի բնատուր գեներ աշակերտների մեջ արթնացնելու և ավելի մեծ ձեռքբերումների հասնելու համար: Նախարարը մանկավարժական կոլեկտիվին պարգևատրեց պատվոգրով: 25 տարիների ընթացքում դպրոցի ուսումնական գործընթացները փայլուն կերպով կազմակերպել են ուսումնական գծով փոխտնօրենները: Մասնաճյուղի հիմնադրման առաջին տարիներին այդ գործընթացն իրականացնում էր Մաքսիմ Զվակիմյանը, այնուհետև՝ Գայանե Ասրյանը, Էլմիրա Քարամյանը, զինադարի կնքումից հետո՝ հայր լեզվի և գրականության ուսուցչուհի Անահիտ Պետրոսյանը, 1999թ. սեպտեմբերի 1-ից դպրոցի նոր շենքում փոխտնօրենի պարտականությունները կատարում էր մաթեմատիկայի ուսուցչուհի Կարինե Զիլինգարյանը: 2011թ. փետրվարի 1-ից առայսօր ուսումնական մասը ղեկավարում է մաթեմատիկայի ուսուցչուհի Սուսաննա Արզումանյանը: Իրենց սրտի խոսքն ասացին նաև դպրոցի տարբեր տարիների շրջանավարտներ՝ դպրոցին կից շեֆ գործարարի հրամանատար Գրիգորի Սահակյանը, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Նարինե Մելքունյանը: 25-ամյակի առթիվ դպրոցը հանդես էր եկել հետաքրքիր նախաձեռնությամբ: Ստեփանակերտի կրթօջախների միջև անցկացրել էր օլիմպիադա ֆիզիկա և մաթեմատիկա առարկաներից, որոնց հաղորդները պարգևատրվեցին տոնական միջոցառման ժամանակ: Այսօր ֆիզմաթ դպրոցում սովորում են 300 աշակերտներ, որոնք, խորանալով բնագիտամաթեմատիկական ուղղությամբ, նաև համակողմանի գիտելիքներ են ստանում մյուս առարկաներից, ինչը դրսևորվեց նաև հանդիսության ժամանակ սաների ներկայացրած գրական-երաժշտական համարներով: Գիտելիքը հզոր ուժ է, գիտելիքներով զինված մարդը՝ անպարտելի: Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցն արդեն 25 տարի է՝ առաջնորդվում է այս ազնիվ գաղափարով և մեծ պատասխանատվությամբ իրականացնում մատաղ սերունդի դաստիարակությունն ու կրթությունը, լիիրավ մարդու և քաղաքացու կերտումը, գիտության անդաստանների նվաճումը:



ջողությունների, և միջազգային բնագծեր նվաճելը հեռու չի լինի: Կառավարության ղեկավարը ԼՂՎ վարչապետի հուշամեդալով պարգևատրեց դպրոցի մի խումբ ուսուցիչների՝ Նելլի Օհանյանին, Կարինե Զիլինգարյանին, Կարագոզատ Գևորգյանին, Սուսաննա Արզումանյանին, Աշոտ Արեայանին, Գայանե Բաղդասարյանին, Էլզա Գրիգորյանին, Գայանե Ասրյանին, նախկին տնօրեններ Գեորգի Սահակյանին, Վիտալի Գաբրիելյանին, մայր դպրոցի տնօրեն Զայկազ Նավասարդյանին: Շնորհավորանքի իր խոսքն ասաց նաև Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի տնօրեն

«ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՆԵՐ». ԽԱՂ-ՄՐՅՈՒՅԹՆԿ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԿԱՆ

Օրերս Արցախի պետական համալսարանում կազմակերպված հերթական միջոցառումը նվիրված էր ԼՂՎ անկախության հանրաքվեին և Սահմանադրության օրվան: Նման միջոցառում ԱրՊՀ իրավագիտության բաժնի ուսանողների կողմից արդեն 8-րդ անգամ է կազմակերպվում: Այս անգամ խաղ-մրցույթը, որը կրում էր «Իրավագիտության գիտակներ» անունը, կազմակերպվել էր իրավագիտության բաժնի 2-րդ և 3-րդ կուրսերի ուսանողների միջև: Միջոցառմանը ներկա էր ԼՂՎ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուկասյանը, ով շնորհավորեց ներկաներին՝ պետական կարևոր տոների՝ Անկախության հանրաքվեի 23 և Սահմանադրության օրվա 8-րդ տարեդարձերի առթիվ: «Անչափ կարևոր է, որ այսօրվա մեր տոնական միջոցառումներից ոչ միայն օգուտ, այլև անհրաժեշտ դասեր քաղենք, հետևություններ անենք, թե ինչ է նշանակում ապրել հիմնական օրենքով: Ու քանի որ կազմակերպիչը Արցախի պետական համալսարանի տնտեսաիրավաբանական ֆակուլտետի իրավագիտության բաժինն



է, կուզենայի, որ նրանց նախաձեռնությունները շարունակական բնույթ կրեն, և այս միջոցառումը ոչ միայն տոնական օրերին անցկացնենք, այլև ամենօրյա դասերի միջոցով, որպեսզի հասարակության շրջանում պարզաբանվեն մեր երկրի սահմանադրության ամենակարևոր դրույթները», - նշեց Ա. Ղուկասյանը: Խաղին մասնակցում էր 4 թիմ՝ «Ժողովրդավարություն», «Իրավահավասարություն», «Սիսանություն», «Ազատություն», որոնց առաջադրվեց 15 հարց: Առողջ մրցակցության մթնոլորտ էր տիրում բեմում, քանզի դրան խթանում էր նաև հետաքրքիր հարցերի շրջանակը: -Զամաձայն ԼՂՎ Սահմանադրության 38-րդ հոդվածի՝ ո՞րն է հասարակության բնական և հիմնական հիմքը: -«Երեխայի իրավունքի մասին» կոնվենցիայի համաձայն՝ ո՞վ է համարվում երեխա: -ԼՂՎ-ում արտադատական ընթացակարգով ազատությունից զրկելն իրականացվում է Սահմանադրությամբ ամրագրված բացառիկ դեպքերում և ուղեկցվում է խիստ սահմանափակ ժամկետով: Ի՞նչ ժամկետի մասին է խոսքը: -Միջազգային իրավական ո՞ր փաստաթղթի հիման վրա է ԼՂՎ Սահմանադրությունն ամրագրել պետության կառավարմանը քաղաքացիների անմիջական մասնակցության իրավունքը: Եվ այսպես շարունակ... Մինչ հանձնախումբը, որի կազմում ընդգրկված էին ԼՂՎ Աժ աշխատակազմի գլխավոր մասնագետ, իրավախորհրդատու Լիա Ասրյանը, ԱրՊՀ սահմանադրաիրավական մասնագիտացման 2-րդ կուրսի մագիստրանտներ, կամփոփեր խաղի արդյունքները, իրավագիտության բաժնի ուսանողներն իրենց գեղեցիկ երգի կատարումներով հիացրին հանդիսատեսին: Խաղի արդյունքներով հաղթող ճանաչվեց «Ժողովրդավարություն» թիմը՝ հավաքելով առավելագույն 13 միավոր: Սակայն հարկ է փաստել, որ մնացած թիմերը ևս իրենց գիտելիքներով չէին զիջում միմյանց, քանզի չէին միավորներով էին տարբերվում հաղթող թիմից: Խաղի մասնակիցներին ողջունեց միջոցառման կազմակերպիչ, իրավագիտության ամբիոնի դասախոս Ռիտա Առստանյանը, ով, շնորհավորելով բոլորին ԼՂՎ անկախության մասին հանրաքվեի և Սահմանադրության օրվա առթիվ, հավելեց. «Մեր ուսանողները մեր ապագան են, ու ես ավելի քան հպարտ եմ, որ դասավանդում եմ նման գիտակ սերունդի, ինչի հավաստիքն այսօրվա խաղն է ու նրանց իրավունքի իմացությունը»: Իր ամփոփիչ խոսքն ասաց նաև ԱրՊՀ ռեկտոր Մանուշ Մինասյանը: Շնորհավորելով ներկաներին նման կարևոր տոների առթիվ՝ նա շնորհակալություն հայտնեց ուսանողներին և իրավունքի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմին միջոցառման կայացման կապակցությամբ: Նրա խոսքով՝ այս ութ տարիների ընթացքում տարբեր ձևաչափերով կազմակերպվող միջոցառումներն արդեն իսկ խոսում են բարձր պատասխանատվության մասին: Ռեկտորն առաջարկեց հաջորդ տարի միջոցառումը կազմակերպել բանավեճի ձևով, որպեսզի մասնակցեն նաև դախիլճուն նստածները, և չլինեն պասիվ դիտորդի դերում: Զաղթող թիմը ռեկտորատի կողմից արժանացավ արժեքավոր նվերի:

ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԶԻՐԴ ԴԱՐՈՒՄ

«Եթե մենք սովորեցնենք այնպես, ինչպես սովորեցրել ենք երեկ, ապա մենք երեխաներից կգողանանք նրանց վաղվա օրը»

Ջոն Դյուի

«Մենք՝ մեծերս, շատ միամիտ ենք. մեզ թվում է, թե մենք ենք երեխաներին հսկում, իրականում մենք ամեն վայրկյան երեխաների հսկողության տակ ենք»

Լ. Շանթ

Մեր կյանքի յուրաքանչյուր վայրկյանը նոր է ինքնատիպ պահ է տիեզերքում, անդամալի պահ, որը երբեք այլևս չի կրկնվի:

Ի՞նչ ենք սովորեցնում մենք մեր երեխաներին. սովորեցնում ենք, որ 2.2=4, որ Ֆրանսիայի մայրաքաղաքը Փարիզն է: Ե՞րբ պետք է մենք նրանց սովորեցնենք, թե ովքեր են իրենք: Մենք նրանցից յուրաքանչյուրին պետք է սանք:

- Դու գիտե՞ս, թե ով ես դու... Դու հրա՛շք ես, դու բացառիկ ես: Այս բոլոր անցած տարիներին քեզ մնան ոչ մի երեխա չի եղել: Քո ոտքերը, քո ձեռքերը, քո մատները, քո շարժումը... Դու կարող ես դառնալ մի նոր Շեքսպիր, Միքելանջելո, Քեթհոլվեն: Դու ամեն ինչի ունակ ես: Այ՛ր դու հրաշք ես և երբ մեծանաս, մի՞թե կարող ես վիրավորել կամ վնասել մեկ ուրիշին՝ քեզ մնանին, որը նույնպես հրաշք է:

Պարլո Կասալս

Եթե կա երջանիկ հասարակություն, կան նաև երջանիկ երեխաներ:

Ջ. Գյուլամիրյան

Հոկտեմբերի 24-ին Երևանի Խ.Աբովյանի անվան հայկական պետական համալսարանը Երևանի Անանիա Շիրակացու անվան Ճեմարանում հրավիրեց «Տարրական դպրոցի զարգացման հեռանկարները 21-րդ դարում» խորագրով գիտաժողով:

Մասնակցում էին պրոֆեսորներ, դոկտորներ, դոցենտներ, Կրթության ազգային ինստիտուտի մասնագետներ, ուսուցիչներ, ինչպես նաև տարրական դպրոցի հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձինք: Աշխատաժողովում հիմնականում քննարկվել են տարրական դպրոցի կրթական ծրագրեր և ժամանակակից տարրական կրթության հոգեբանական հայեցակարգեր:

Մասնակավորժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ջուլիետա Գյուլամիրյանը** «Ժամանակակից մանկակենտրոնությունը՝ որպես հունանիստական մանկավարժության հուսալի տեսակետ» հոդվածում նշում է, որ կրթության հիմնախնդիրներով զբաղվող բոլոր ոլորտների համար ընդունելի և հանրաճանաչ է այն տեսակետը, համաձայն որի՝ երեխաների կրթության ամենաարդյունավետ միջավայրը ժողովրդավար հասարակության տարրերով ձևավորված սոցիալ-մշակութային համակարգն է, այն միջավայրը, որում երեխան՝ որպես անձ, անհատ, մեծերի կողմից ստանում է սոցիալական, հոգեկան և մշակութային զարգացման հավասարաչափ հնարավորություններ: Հասարակության տեսակետով ձևավորված սոցիալ-մշակութային համակարգն է՝ դաստիարակչական այսպիսի միջավայրի շնորհիվ ունենալ իր ընտրած շարժընթացի ուղղությունն ու կատարելագործումն ապահովող մարդկանց սերունդ: Պրոֆեսորը դիտարկեց հեռանկարային համադիսացող մանկակենտրոն դաստիարակչության նորագույն ուղղությունները:

1. երեխաների և մանկության բարձրարժեքության նոր գաղափարի ձևավորումը հասարակական գիտակցության մեջ,
2. գիտելիքների նկատմամբ նոր մոտեցումները,
3. դպրոցը որպես մանկակենտրոն կրթության օջախ,
4. ուսուցիչը,
5. երեխան ուսուցչի համար,
6. երեխայի դաստիարակչության մանկավարժական դիրքորոշումները,
7. երեխա- մեծ հարաբերությունը,
8. երեխային մշտապես ուսումնասիրելը,
9. կողմնորոշումը դեպի նոր հումանիստական մանկավարժություն,
10. մեծերի տեսակետների, համոզմունքների փոխանցումը «երեխա-մեծ» հարաբե-

րությանների ոլորտ:

Տաթևիկ Նալբանդյանը՝ Ա. Շիրակացու անվան Ճեմարանի տնօրենի խորհրդակցանք միջազգային ծրագրերի հարցերով, «Կրթության սահմանները կամ տարածքային նոր նվաճումները Միջազգային բակալավրիատի ուսումնական ծրագրերի օրինակով» ներկայացրած թեմայում դիտարկեց կրթության ոլորտում սահմանների տեղաշարժը Միջազգային բակալավրիատի ուսումնական ծրագրերի օրինակով: Միջազգային բակալավրիատն առաջարկում է 4 ծրագիր՝ տարրական (3-6 տարեկաններ), հիմնական (6-12 տ.), ավագ դպրոցների (16-18 տ.) համար և մասնագիտական հավաստագրման ծրագիր (16-18 տ.), որն ավագ դպրոցի աշակերտների համար է, ովքեր կողմնորոշվել են մասնագիտական ընտրության հարցում և ցանկանում են այն խորությամբ ուսումնասիրել ավագ դպրոցում:

Միջազգային բակալավրիատի **կրտսեր դպրոցի (3-6 տ.)** ծրագիրն իրականացվում է միջառարկայական վեց թեմաները տարբեր տեսանկյուններից ուսումնասիրելու միջոցով:

Հիմնական դպրոցի (6-12 տ.) ծրագիրը կազմված է 3 հիմնարար սկզբունքներով՝ համապարփակ ուսումնառություն, միջմշակութային իրազեկվածություն, հաղորդակցում: Ծրագրի բովանդակությունն ամբողջովին կազմվում է դպրոցների կողմից, և բովանդակությանը զուգահեռ՝ շեշտադրվում է համայնքին ծառայելու գաղափարն ու հետազոտությունների իրականացումը: Հետազոտական-որոնողական աշխատանքների արդյունքում աշակերտները (մենք անձամբ երկխոսության մեջ ենք մտել մի քանի աշակերտների հետ) առանց կաշկանդվելու, բարդությամբ լրվելու արտահայտվում են, ասում՝ ինչ մտածում են: Մեր տարածաշրջանում՝ ԼՂՀ-ում, ցանկալի է տեղայնացնել հետազոտական-որոնողական աշխատանքները (դրանք նաև ծրագրային պահանջներ են) մեր երեխաների պատ, անկաշկանդ խաղի զարգացման համար:

«Թեստերի որակն ու դրանց ազդեցությունը կրտսեր դպրոցականի վրա» (ՀՊՄՀ դասախոս) թեմայում, ըստ բանախոսի, թեստ հանձնող յուրաքանչյուր աշակերտ ենթարկվում է փուլային հետևյալ գործընթացներին, որոնք էլ իրենց հերթին հոգեբանական խոր ազդեցություն են ունենում կրտսեր դպրոցականների վրա:

ա) բուն թեստը հանձնելու և դրան պատրաստվելու գործընթացը, երբ թեստում հանդիպում է, օրինակ՝ մշակութային, թեմատիկ այնպիսի տեղեկատվություն, որը նոր է աշակերտի համար և հնարավոր է ընդհանրապես չընկալվի կամ սխալ ընկալվի,

բ) հետադարձ կապը, որն աշակերտները ստանում են թեստի վերաբերյալ, հիմնականում ընկալվում է թվային արժեքի տեսքով, ուստի, միավորային գնահատումը պետք է հնարավորինս հասկանալի բացատրվի աշակերտին,

գ) առավելագույնս զգուշություն է պահանջում թեստերի գնահատականների վրա որոշումներ կայացնելը. միայն որակյալ թեստի թվային գնահատականը կարելի է գործածել սովորողի վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

«Ուսումնական իրավիճակները՝ որպես համապիտանի կարողությունների ձևավորման և զարգացման միջոց» զեկուցման մեջ բանախոս Կարինե Զիբուխյանը նշեց, որ ժամանակակից դասի կրթական խնդիրը աշակերտների ակտիվ գործունեությունը խթանող պայմանների ապահովումն է: Այսինքն՝ չափորոշչային պահանջների իրագործման նպատակով ուսուցիչը ստեղծում է իրավիճակներ, որտեղ երեխաները ուսումնական գործունեություն են ծավալում՝ լուծելով բազմաբնույթ կրթական խնդիրներ: Ուսումնական իրավիճակներն ուսումնական գործընթացում կազմակերպվող այնպիսի հատուկ իրավիճակներ են, որտեղ երեխաներն ուսուցչի օգնությամբ տեսնում են ուսումնասիրվող նյութը, հետազոտում են՝ կատարելով զանազան գործողություններ, օրինակ՝ վերափոխում են այն, վերածակերպում

կան նկարագրում, օգտվում են տեղեկատվական աղբյուրներից, վերլուծում են նյութը, խմբավորում այն, դասակարգում և այլն: Կատարելով այս ամենը՝ աշակերտները յուրացնում են վերառարկայական համապիտանի գործողություններ կատարելու կարողություններ, այսինքն՝ առարկայական գիտելիքներից բացի, ձեռք են բերում ճանաչողական և հաղորդակցական բանիմացություն:

«Լոգոպեդական աշխատանքի օպտիմալ մոդելը՝ որպես տարրական դպրոցի զարգացման օղակ». դպրոցում լոգոպեդական աշխատանքի օպտիմալացման ուղիներ մշակելիս դիտարկվել է այն որպես մի մոդել, որը պետք է ներառի՝

1. աշխատանքի կազմակերպման հստակ մոտեցումներ,
2. համապատասխան աշխատանքային պայմաններ,
3. համապատասխան պատրաստվածություն ունեցող լոգոպեդներ,
4. աշխատանքային համապատասխան և արդյունավետություն ապահովող փաստաթղթեր,



5. արդյունավետ համագործակցություն լոգոպեդական աշխատանքին առնչվող այլ մասնագետների և աշակերտների ծնողների հետ,

6. կարգապահական և մասնագիտական վերահսկում:

Մոդելի իրագործումը հնարավոր է հետևյալ 4 ուղիներով.

1. մեթոդական աջակցության և մասնագիտական վերահսկման ապահովում,
2. հայերենով մեթոդական, դիդակտիկական նյութերի մշակում և աշխատանքային պայմանների բարելավում.
3. Փաստաթղթերի օրինակելի համընդհանուր փաթեթի մշակում,
4. Դպրոցում աշխատող այլ մասնագետների և աշակերտների ծնողների հետ համագործակցության բարելավում:

Վերոնշյալ մոդելը գործում է Երևանի Անանիա Շիրակացու անվան Ճեմարանում:

«Սովորողների արժեքային համակարգի ձևավորման հիմնախնդիրները տարրական դասարաններում» զեկուցման մեջ բանախոսը, կարևորելով ուսուցման դաստիարակչության սկզբունքի դերը, նշում է, որ 21-րդ դարում ապրող երեխային արժեհամակարգի ձևավորման հարցում այսօր կան մի շարք եական դժվարություններ:

- շատ երեխաներ փակվում են՝ ստեղծելով իրենց միկրոաշխարհը, որովհետև ծնողների զբաղվածության պատճառով ընտանիքներում բավարար ուշադրության չեն արժանանում: Երեխաներին ջերմությամբ պարուրելու բացը լրացնելու պարտականությունը հաճախ ընկնում է ուսուցիչների ուսերին:

-այսօրվա երեխաները սիրում են արագ զարգացող և փոփոխվող իրադարձություններ: Արագ փոփոխվող աշխարհը և տեղեկատվության շեշտակի աճը բերում են նրան, որ դասագրքերը երեխաների համար դառնում են ծանծաղի, և նրանք լավ չեն սովորում:

-ուսումնական գործընթացում երեխան պիտի դաստիարակվի անընդհատ, սակայն հաճախ հիմնական շեշտը դրվում է գիտելիքի, տեղեկատվության ձեռքբերման վրա:

-արտաքին աշխարհը շատ արագ է բացվում երեխաների առջև: Նրանց զգացական աշխարհը և գիտելիքները երբեմն չեն համապատասխանում իրենց տարիքին: Այստեղ էլ

բախվում ենք երեխայի վաղ զարգացման հետ:

«Ներդրողական վերահսկողության դերն ու նշանակությունը տարրական դպրոցում» թեմայում Երևանի Խ. 78 դպրոցի տնօրեն Ազնիվ Միրզոյանը ներդրողական վերահսկողության անհրաժեշտությունը համարում է ոչ միայն ղեկավարության, այլև յուրաքանչյուր ուսուցչի առաջընթացի, նրա աշխատանքի գնահատման և նորարարական գործունեության շարժընթացի ապահովման պարտադիր պայման: Նա, կարևորելով նաև տարրական դպրոցի դերը հիմնական դպրոցի ողջ համակարգում, կանգ առավ այս օղակում իրականացվող ներդրողական վերահսկողության բովանդակության և ձևերի վրա՝ հաշվի առնելով նաև առաջինից չորրորդ դասարաններում մշտապես կատարվող փոփոխությունները:

«Ջարգացող ուսուցման մոտեցումների կիրառումը տարրական դպրոցում» հոդվածում բանախոսը նշում է, որ, ելնելով զարգացող ուսուցման սկզբունքներից, արդյունավետ աշխատող ուսուցիչը դասն այնպես է պլանավորում, որ կարողանա՝

- աշակերտին մղել ինքնուրույնաբար կամ դասընկերների հետ աշխատելով ձեռք բերել գիտելիքների որոշակի պաշար,
- ձևավորել այդ գիտելիքները կիրառելու կարողություններ և հմտություններ,
- սովորեցնել սովորել,
- զարգացնել ստեղծագործական մտածողություն և ինքնուրույն գործունեություն ծավալելու կարողություն:

«Կրտսեր դպրոցականների ստեղծագործական կարողությունների զարգացման հիմնախնդիրները» հոդվածում հոդվածագիրը դիտարկեց խորհրդային և այսօրվա ազգային դպրոցի ուսումնական գործընթացների բնույթը: Ըստ նրա՝ եղել է ու կան երեք կարգի դպրոցներ. սերտողական, բացատրական-ուսուցողական, զարգացող: Եվ այսօր կրթությունը «կանգնած» է ուսուցողական և զարգացող դպրոցների սահմաններին, և բազմաթիվ մանկավարժների, մեթոդիստների ուսումնասիրություններ են նվիրված այս փուլում նշված հիմնախնդրի ճիշտ լուծմանը:

«Ձևավորման պարագաների դերը տարրական դպրոցում» հոդվածում «Այբ» տարրական դպրոցի ուսուցչուհին կարծում է, որ տարրական դպրոցում սովորող աշակերտի ուշադրությունը չի դառնում կանաժին, եթե դասագործընթացում չեն կիրառվում իր հետաքրքրությունների շրջանակում գոյություն ունեցող հմարներ:

Ժամանակակից թվային միջոցների և դրանց միջոցով ստեղծված ուսումնական միջոցների (ուսումնական ֆիլմեր, խաղեր, տեսաֆիլմեր, էլ. դասեր, էլ. գրքեր և այլն), տեսաուղղակի հմարների և մանկավարժական ձեռքբերումների զուգորդմամբ ստեղծված գրավիչ և պրակտիկ զեկուցման պարագաներն ու պիտույքները, ինչպես նաև սովորողի ստեղծարար գործունեության (նախագծեր) ճանապարհով արդյունքում ծնված զեկուցման պարագաների ու պիտույքների մեկտեղումը ուսումնական գործընթացը դարձնում են հետաքրքիր, դյուրին և արդյունավետ:

«Ինչպես ծնողներին դարձնել դպրոցական համայնքի ակտիվ անդամ» զեկուցման մեջ դիտարկվեցին Ա. Շիրակացու անվան Ճեմարանում կիրառվող սովորողների ծնողներին իրենց երեխաների ուսումնական կյանքում ներգրավելու հետաքրքիր նորարարական և առանձնահատուկ եղանակներ: Հատկանշական էին սովորող-ծնող-ուսուցիչ եռակողմ կոնֆերանսները: Ուսումնական տարվա երկրորդ կեսին ճեմարանի տարրական և հիմնական դպրոցի ծնողները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց երեխայի և դասավանդող ուսուցիչների մասնակցությամբ եռակողմ կոնֆերանս-հանդիպումներին, որոնց ժամանակ սովորողները ծնողներին իրենց տեսանկյունից ներկայացնում են դպրոցը, իրենց ուսումնական թրթապանակները, ինչպես նաև ուսուցիչների հետ քննարկում են սովորողների աշխատանքները կամ պլանավորում հետագա անելիքները:



ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԶԻՐԴ ԴԱՐՈՒՄ

Յ «Տարրական դպրոցի շրջանավարտների ձեռքբերումների ներկայացումը ստուգատեսի շրջանակներում» հոդվածում Ա. Շիրակացու անվան ճեմարանի Միջազգային բակալավրիատի կրթադաստիարակչական ծրագրերի համակարգող Աստղիկ Բալայանը պարզաբանեց, որ տարրական դպրոցի ավարտին յուրաքանչյուր սովորողի հնարավորություն է ընձեռվում իրականացնելու պլանավորված և մեծահասակների կողմից ուղղորդվող հետազոտություն, որի արդյունքները գրավոր և բանավոր իրապարակային ձևով ներկայացվում են ստուգատեսի շրջանակներում: Այս գործընթացում կարևոր ոչ այնքան ստացված արդյունքների ներկայացումն է սովորողի կողմից, որքան այդ ճանապարհին իր կատարած պլանավորման, կազմակերպման, վերլուծության և ամփոփման աշխատանքները, որոնց ընթացքում էլ տեղի է ունենում անձի համակողմանի զարգացումը:

«Ապագա դասվարի մասնագիտական պարաստվածության մասին» թեմայով հանդես եկավ տարածաշրջանում գործող «Մաթեմատիկա» դասագրքի համահեղինակ, մ.գ. ք., պրոֆեսոր Սուրեն Իսկանդարյանը: Նա կարևորություն է տալիս բուհերում ապագա դասվարների մասնագիտական պարաստվածությանը: Բանախոսի համոզմամբ՝ դա ապահովելու համար մաթեմատիկայի դասընթացն ուսումնասիրելու գործընթացում պետք է օգտվել տարրական դասարաններում գործող դասագրքերում տեղ գտած առաջարկանքներից՝ ցույց տալով, թե ինչպես են կիրառվում մաթեմատիկայի տեսական հիմունքները մաթեմատիկայի տարրական դասընթացում: Հեղինակը համառոտ ցույց տվեց, թե որքանով է «Բազմությունների տեսության տարրերը» թեմայի առանցքային հարցերը պրոյեկտվում մաթեմատիկայի տարրական դասընթացից: «Բազմություն» հասկացության փոխարեն տարրական դպրոցի առաջին դասարանում օգտագործվում են «հավաքածու», «խումբ» հասկացությունները: Ըստ որում, վերջավոր բազմության ընդունված գրանցման ձևի փոխարեն բազմության տարրերը շրջափակվում են, ընդգրկվում են «շրջանակների» մեջ: Այսպես՝

$$A = \{2, 4, 6, 8\} \text{ միանիշ զույգ թվերի բազմությունը գրվում է այս տեսքով.}$$

$$\boxed{2, 4, 6, 8}$$

Առաջին դասարանի գործող դասագրքում 21-րդ էջում տրված են 4 տարրանոց խմբերների, 5 տարրանոց մատիտների և 3 տարրանոց գլանների բազմություններ, իսկ 28-րդ էջում տրված են 4 տարրանոց գրքերի և 5 տարրանոց օղակների բազմությունները: Նշված դասագիրք-տետրում կան նման տիպի բազմաթիվ օրինակներ: Բազմությունների տրման եղանակների մասին մենք գիտենք՝ եթե վերջավոր բազմությունը պարունակում է թիվ թվով տարրեր, ապա այն տրվում է տարրերի թվարկման եղանակով: Եթե բազմությունը պարունակում է վերջավոր կամ անվերջ թվով տարրեր, այն կարելի է տալ բնութագրիչ հատկությամբ: Դասագիրք-տետրի 48-րդ էջում, փաստորեն, տրված են վերջավոր տարրեր պարունակող բազմություններ, շրջանակների մեջ տրված են տարբեր քանակությամբ երկրաչափական պատկերներ, մարմիններ, իսկ 32-րդ էջում, որպես բազմության տարրերի բնութագրիչ հատկություն, նշված է պատկերների ձևը: Այսպես, թիվ 3 վարժությունում պահանջվում է համեմատել շրջանների, բառակապակցների և եռանկյունների բազմությունները, որոնցում, որպես բնութագրիչ հատկություն, համոզես են գալիս «շրջան», «քառակուսի», «եռանկյուն» հասկացությունները:

Մի քանի կոնկրետ օրինակների միջոցով հեղինակը ցույց տվեց բուհական նշված դասընթացների համատեղ ուսուցման անհրաժեշտությունը:

«Նկարագրական խոսք կառուցելու կարողության ձևավորումը մայրենի դասերի ժամանակ» թեմայով մ.գ. ք., դոցենտ Մարգարիտ Միրունյանը խոսեց այն մասին, որ նկարագրական խոսքի զարգացմանը նպաստում են առարկայական դիտումները, էքսկուրսիաները, տարբեր առարկաների, երևույթների համեմատությունը, հոմանիշ և հակահիշ բառերի գործածությունը և այլն: Մայրենի դասերի ժամանակ նկարագրական խոսք կառուցելու կարողության ձևավորումը ենթադրում է

ուսուցչի և աշակերտների նպատակամղված և համատեղ աշխատանք, որի կարևոր բաղադրիչներն են՝

1. նկարագրական խոսք կառուցելու հաջողական քայլերի յուրացումը և դրա ճիշտ կիրառումը,
2. նախաայբբենական շրջանում նկարագրող և նկար-պատմությունների շուրջ տարվող աշխատանքները,
3. առարկայական դիտումները, էքսկուրսիաները, տարատեսակ առարկաների և երևույթների համեմատական նկարագրությունը,
4. նկարից (հատկապես բնանկարից) ստացած տպավորությամբ բանավոր պատում հյուսելը,
5. հոմանիշների և հակահիշների, ինչպես նաև համեմատական պատկերների ու պատկերավորման միջոցների գործածությունը:

Վերոնշյալ բաղադրիչների իրականացման հաջողվածությունը մեծապես պայմանավորված է խԻԿ համակարգի կիրառական հնտությամբ:

«Ոչ ստանդարտ տրամաբանական առաջադրանքները որպես մաթեմատիկական խոսքի արդյունավետության բարձրացման գործոն տարրական դասարաններում» թեմայով բանախոս մ.գ. ք., դոցենտ Գագիկ Հայրապետյանը առաջարկեց տարրական դպրոցում հետևյալ ոչ ստանդարտ տրամաբանական առաջադրանքների խորագրերի դասակարգումն ըստ դասարանների:

Առաջին դասարան. «Տառաշրջաններ», «Կառուցե՛ք պատկերը», «Իմաստուն բաժանում» առաջադրանքի փոխարեն՝ բառերով խաղեր. «Կորչեն աստղանիշները», «Դատարկ վանդակներ», «Լաբիրինթոսներ», «Ձուրն իր ճամփան կգտնի»:

Երկրորդ դասարան. «Չողկներով հավասարություններ», «Յոթ չափե՛ք և մեկ կտրե՛ք», «Լուցիկու հատիկներով պատկերներ», «Ստացե՛ք անհրաժեշտ թիվը», «Կռահե՛ք հաջորդ թիվը», «Ամենաքիչը», «Խաչվող թվեր», «Ձո՛ւյզ, թե՞ կենտ», «Արագ հաշվե՛ք», «Օրացույց», «Ժամացույց»:

Երրորդ դասարան. Թվերի գուշակում, տրամաբանական հարցեր, «Ով՞ ով է», «Ստի ոտքը կարճ է», «Գաղտնագրեր», «Կշռումներ և կեղծ դրամներ», «Որոշե՛ք տարիքը», «Ծածկագրեր»:

Չորրորդ դասարան. «Տեղադրե՛ք գործողության նշանները», «Լուծե՛ք առանց փոփոխականների», «Գաղտնի՛ ի լուր աշխարհի», «Բաժանելիության այբուբեն», «Օրինաչափություններ», «Կտրե՛ք և կառուցե՛ք», «Շրջագայություններ կամուրջներով»:

Ուսուցման այս դասակարգմամբ կարելի է հասնել մաթեմատիկական խոսքի հնարավորությունների բարձրակետին: Իսկ արդյունավետությունը կախված է դրանց անընդհատ կիրառումից, ծրագրերի նպատակաուղղվածությունից և դիդակտիկ առաջադրանքների հետ համադրումից:

«Բանախոսական մոդուլների ուսումնասիրումը՝ որպես կրտսեր դպրոցականի անձի ձևավորման միջոց» թեմայում բ. գ. ք., դոցենտ Եվա Մնացականյանը ներկայացրեց մայրենի դասագրքերում տեղ գտած բանախոսական մոդուլները՝ շուտասեղաններ, սուտասեղաններ, հանելուկներ, հաշվելուկներ, խաղերգեր, խնդուկներ, հեքիաթներ, առասպելներ և այլն: Դրանք բացառիկ դեր են խաղում կրտսեր դպրոցականի անձի ձևավորման գործում, կախված ժանրից ու բովանդակությունից՝ այս կամ այն չափով ընդլայնում են աշխար-

հաճանաչողությունը, ձևավորում և զարգացնում են մի շարք կարողություններ, դաստիարակում մարդկային գեղեցիկ հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են երեխայի՝ որպես հասարակության լիարժեք անդամի և առողջ հոգեբանություն ունեցող մարդու ձևավորման համար:

«Ինքնուրույն ընթերցանության բաղադրիչ մեթոդական կառույցը՝ որպես սովորողների՝ հասկանալով կարդալու կարողության ձևավորման միջոց» թեմայում «Ինքնուրույն ընթերցանություն» գրքերի հեղինակները, որպես բանախոսներ, իրենց ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա եզրակացրել են, որ ինքնուրույն ընթերցանության գործընթացում սովորողների մեջ հասկանալով կարդալու կարողության ձևավորման հարցում էական դերակատարություն ունի ճիշտ մշակված մեթոդական կառույցը: Այդ նպատակով 2-4-րդ դասարաններում կարելի է կիրառել հարցերի այսպիսի այդուսակ.

«Կրթական բաղադրիչները»	«Հարցեր»
Թեման	<ul style="list-style-type: none"> • Ինչի՞ մասին է ստեղծագործությունը: • Ինչպե՞ս է կարևոր հարցեր են այստեղ շոշափվում: • Ի՞նչը թեզ ավելի հետաքրքրեց: • Կարողաց՞ի՞ ես այդ թեմայով ուրիշ ստեղծագործություններ: Ի՞նչով են նրանք նման կամ տարբեր: • Առաջարկի՞ն նոր վերնագիր:
Բովանդակությունը	<ul style="list-style-type: none"> • Որտե՞ր և ե՞րբ են տեղի ունենում դեպքերը: • Ինչպե՞ս են մշակվում ներկայացված գործողությունները: • Ինչպե՞ս են զարգանում դեպքերը: • Ինչո՞վ են վերջանում գործող անձանց գործողությունները: • Բնագրի ո՞ր դրվագն է ավելի հիշվել, սպավորվել: Հիմնավորի՞ր ընտրությունը: • Փորձի՞ր այլ կերպ ավարտել այս ստեղծագործությունը:
Հիմնական միտքը՝ գաղափարը	<ul style="list-style-type: none"> • Ո՞րն է ստեղծագործության հիմնական միտքը: • Ի՞նչ տրամադրություն թեզ փոխանցվեց: Ի՞նչ ցանկություն առաջացավ թո՞ մեջ: • Ի՞նչ խորհուրդ կտաս ստեղծագործության հերոսներին:
Կերպարները	<ul style="list-style-type: none"> • Ո՞վ է գլխավոր հերոսը կամ հերոսները: • Ինչպե՞ս են նրան պատկերացնում: • Թեզ դու՞ր են գալիս նրա արարքը, վարքը, հարոդակցման ձևը: Հիմնավորի՞ր պատասխանը: • Ինչպե՞ս են գլխավոր հերոսին վերաբերվում ստեղծագործության մյուս հերոսները: Ինչպե՞ս է վերաբերվում նրան հեղինակը: • Հնարավոր է՞ ստեղծագործության գործող անձանց խոսքերից որոշել՝ ինչպիսին են նրանք (բարի, չար, վատահիշի, արդարադատ, խորամանկ և այլն): Առա՞ծը հիմնավորի՞ր օրինակներով: • Որտե՞ր են կատարվում դեպքերը: Վայրի նկարագրությունն օգնո՞ւմ է թեզ գաղափար ստեղծագործության տրամադրությունը, հասկանալու հերոսի գործեցակերպի տրամաբանությունը:
Վերլուծում և համադրում	<ul style="list-style-type: none"> • Ի՞նչ մատերի կարելի է բաժանել ստեղծագործությունը: • Ո՞րն է ստեղծագործության ամենակարևոր մասը: • Վերնագրի՞ր յուրաքանչյուր հատվածը: • Բանի՞ պատկեր է հերթափոխում ստեղծագործության մեջ: • Առանց ո՞ր պատկերի հնարավոր չէ հասկանալ ստեղծագործության հիմնական միտքը: • Ի՞նչ պատկերներ կարող են ավելացնել ստեղծագործության բովանդակության մեջ:
Լեզվարտահայտչական միջոցները	<ul style="list-style-type: none"> • Ինչպիսի՞ն է ստեղծագործությունը՝ ուրա՞խ, թե՞ տխուր: Ինչո՞ւ: • Ո՞ր բառերը թեզ հուզեցին: • Ո՞ր բառերն ու արտահայտությունները թեզ օգնեցին հզորիտ պատկերացնելու նկարագրվածը: Հնարավոր է՞ դրանք փոխել ուրիշ բառերով: • Ինչի՞ կամ ո՞ւմ հետ կարելի է համեմատել ստեղծագործության հերոսին, նկարագրված առարկան կամ պատկերը... • Ի՞նչ գույներով դու կնկարեիր հերոսին, պատկերը: Ինչո՞ւ:
Ստեղծագործության տեսակը (ռաջին առանձնահատկությունները)	<ul style="list-style-type: none"> • Ի՞նչ կարողացի՞ր պատմվածք, հեքիաթ, առա՞յ, բանաստեղծություն: • Ի՞նչ առանձնահատկություն ունի կարդացած ստեղծագործությունը: • Հորինի՞ր նման ստեղծագործություն (պատմվածք, հեքիաթ, առակ, բանաստեղծություն և այլն):
Արտահայտիչ ընթերցանություն	<ul style="list-style-type: none"> • Կարդալու ընթացքում ե՞րբ և ինչպիսի՞ դադարներ կարող են կատարել: Ինչո՞ւ: • Ստեղծագործության ո՞ր հատվածը կարդալիս կարելի է ծայր բարձրացնել կամ իջեցնել: • Ի՞նչ արագությամբ և տոնայնությամբ պետք է կարդալ ստեղծագործության նշված նախադասությունը, հատվածը: Ինչո՞ւ:

«Մաթեմատիկական նյութի յուրացումը «Թվային ուղղի, քանոնի և շղթայի» միջոցով» հոդվածում բանախոսը նշում է, որ տարրական դասարաններում «Մաթեմատիկա» առարկայից ուսումնասիրվող թեմաների զգալի մասը կարելի է վերհանել հենց «Թվային ուղղի, քանոնի և շղթայի» մեթոդով: Իր տասնամյա մանկավարժական գործունեության ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում ձևավորված այդ մեթոդը հնարավորություն է ընձեռում զարգացնել տրամաբանական մտածողություն, խնդրում հայտնաբերելու այն, ինչը կարող է ուրիշ խնդիրների լուծման ժամանակ պետք գալ, տվյալ կոնկրետ իրադրության խորքից ընդհանրականը երևան հանել, սովորեցնում է կռահել և ապացուցել, ձևավորում է կանոնավոր աշխատելու և ինքնուրույն հայտնաբերելու կարողություն և այլն:

«Գրաժանանաչության գործընթացում առաջացող դժվարությունների հաղթահարման ուղիներ»ը հոդվածը հրատարակվել է «Լուսարար»-ի հ. 25 (382)-ում:

«Բազմապատկման արդյունակի ուսուցման մի մոտեցում» թեմայով զեկուցողը տողերիս հեղինակն է, և հուսով ենք՝ այն կիրառարակվի «Լուսարար»-ի հերթական համարներից մեկում:

Գիտաժողովի արդյունքում առաջարկվեցին **ակտիվացնել տարրական կրթության ոլորտում կոնկրետ հետազոտությունները ու փորձարարական ուսումնասիրություններ հետևյալ ուղղություններով.**

1. տարրական դասարանների ուսուցչի մասնագիտական կրթությունների գնահատում,
2. տարրական դպրոցում սովորողների գնահատման հիմնահարցը.
 - գ մ ա հ ա տ մ մ ա ն,
 - գնահատանիշի անհրաժեշտությունը,
 - գնահատման ազդեցությունը աշակերտի հոգեբանության վրա,
 - ստանդարտացված թեստերի դերը, անհրաժեշտ կարողությունների ձևավորման ու գնահատման տեսանկյունից,
3. տարրական դպրոցում բազմամասնագիտական խմբի հիմնական գործառնությունները,
4. տարրականից միջին դպրոց անցման հիմնախնդիրների հաղթահարման հիմնական ուղիները,
5. տարրական դպրոցում ուսումնառության ձևերի արդյունավետությունը,
6. ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը չափորոշչափեն կրթության համակարգում:
7. ծնողների, սովորողների և մանկավարժական կոլեկտիվի ներգրավվածությունը կրթական միջավայրի ստեղծման և զարգացման գործում:
8. ինքնուրույն աշխատանքները տարրական դպրոցում:

Հավատացած ենք՝ եթե յուրաքանչյուր մասնագետ գոնե մեկ անգամ մանրամասն կարդա այս ամենը և քննարկի ընկերոջ հետ, բավականին փոփոխություն կկատարի մանկավարժական իր գործունեության մեջ:

Աննա ԳԵՏՐՈՍՅԱՆ ԼՂՀ ԿՂԵ ԿՊՏ ԿԵՏԱԼԶ

ԲԱՆԱԿ-ՆԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՐ ՂԻՐՔՊԱՆՆԵՐԸ ԹԱԿԱՎՈՐ ՏՂԵՐՔ ԵՆ...

Եթե չես ուզում դառնալ ազգի գինվորը, ստիպված ես դառնալ օտարի ստրուկը:

Նժդեհ

Որոշման արժանիքը իրավիճակը թելադրում է, որ զինծառայողների և ուսանողության շրջանում բորբոք պահվի հայրենիքին ծառայելու, անձնական մասնակցությամբ երկրի ու նրա զինված ուժերի ձեռքբերումներն անրապնդելու գաղափարը: Հայոց բանակի դիրքապահ զինվորն ու սպան արժանի են բարձր գնահատանքի:

Ահա այս ծրագրի իրականացման շրջանակներում ԱրՊՀ դասախոսների և ուսանողների կողմից կազմակերպվեցին այցելություններ ՊԲ բոլոր պաշտպանական շրջաններ: Ծրագրի նպատակներից են բանակ-հասարակություն (բուհ) կապերի սերտացումը և ամրապնդումը, ռազմահայրենասիրական դաստիարակության ապահովումը, Հայրենիքի զինված պաշտպանության գաղափարի կարևորումը, ուսանող-զինվոր երկկողմանի անմիջական կապերի ստեղծումը, ՊԲ-ում ժամկետային զինծառայություն անցնող ԱրՊՀ ուսանողների ծառայության պայմանների ուսումնասիրումը, նրանց ոգևորելու ու խրախուսելը:

Կազմակերպչական և ընթացիկ հարցերը լուծելու նպատակով ստեղծված հանձնաժողովը՝ ԱրՊՀ ռեկտոր, ՌԵՇՅՍԱ զօնվ պրոռեկտոր, ՌԻՅՍԱ, ՀԿ և ԼԲ, դասախոսական խմբի ղեկավար, ՌԻՎ նախագահ, ՌԻԳԸ նախագահ, միաժամանակյա ելքով 8 խմբերի այցելությունները պաշտպանական բոլոր շրջաններ կազմակերպեց ղեկստեմբերի 5-ին:

Մեր ուղևորության հասցեն էր՝ Մարտակերտի 5-րդ Պաշտպանական շրջան:

Ուղեկցում էր մեզ ՊԲ ԱՅՏԱ բաժնի ավագ սպա Արմեն Պողոսյանը: Ճանապարհը ծովում էր ավերակների միջով...

Աղդամ: Աղբեջանի երբեմնի փառքի ու հայերիս նկատմամբ գլխավոր զենքի ավերակները հոգուս մեջ արթնացրին անցյալի խոհերը:

Օրեցօր բարգավաճող բաղաձր ղեկի իրեն էր ձգում վարպետ հյուսների ու որմնադիրների, տարբեր արհեստավորների, որոնց ձեռքով էլ կերտվում էր թշնամու նշանավոր քաղաքներից մեկը, որի արդյունաբերությունը զարգացնողները, հարուստ ու զանազան խառնուրդների ապրանքն արտադրողները հայեր էին: Ինչէ՞ր ասես, որ չէիր գտնի այդ քաղաքում: Եվ հայերս էլ կախված էինք հենց այդ քաղաքից, որտեղ կարող էինք գտնել հազվագյուտ ապրանքներ, որոնք, սակայն, Աղբեջանի «հմուտ ու ճարպիկ» քաղաքականության շնորհիվ չէին հայտնվում մեր մայրաքաղաքի խառնուրդներում: Ավելին, մեր ողջ ֆինանսական միջոցները սպառվում էին նրանց խառնուրդներում:

Ահա հենց այս քաղաքն էր Արցախյան շարժման օրերին դարձել այն հիմնական որջը, որտեղից

կրակ էր թափվում մեր շեն գյուղերի ու քաղաքների վրա...

Անցնում են նրա ավերակներով ու խորհում. «Այս խաղաղության ու հանգստության համար պարտական ենք այն տղաներին, որոնց արյան գնով մաքրվեց այս հողը ոսոխի չար ոտքից»:

Խոհերս տեղի էին տալիս, որովհետև հասնում էինք Նոր Մարաղա բնակավայրին: Կարողում են ցուցանակի վրա այդ անունը՝ «նոր» որոշիչով, ու հիշողությանս դաշտում արթնանում են նոր անուններ՝ Նոր



Հաճն, Նոր Խարբերդ, Նոր Արեշ... Հայի դաժան ճակատագիր... Կորցրածը վերագտնելու, վերաշինելու, նորով կարողախոսել հազեցնելու կամքի ուժ ու կորով, որ երբեք չի լքել մեր ազգին:

Վերջապես, հասանք 5-րդ Պաշտպանական շրջան: Մեզ դիմավորեց զորամասի հրամանատար, գնդապետ Էդիկ Ասրյանը:

ԱրՊՀ ուսանողները նախապես հոգացել էին զինվորական առօրյան հետաքրքիր դարձնելու մասին. կազմել էին ինտելեկտուալ խաղերի հարցաշարեր, որի նպատակը ոչ այնքան հաղթողին որոշելն էր, որքան ժամանցը հետաքրքիր ու իմաստալից դարձնելը:

Կազմակերպչական հարցերն արագ լուծելով՝ զորամասի զինվորներից կազմվեց 5 թիմ, և սկսվեց խաղը թիմերի միջև: Նրանք հանդես եկան «Բերդ», «Երևան», «Դիվիզիոն-1», «Ֆավորիտ», «Պայքար» անուններով: Ընտրվեց ժյուրի, որի անդամն էի նաև ես:

Բացման խոսքով հանդես եկավ բանֆակի ուսանողուհի Մարինե Հարությունյանը, որն էլ վարեց ողջ խաղը: Նա, ողջունելով իրենց հասակակից զինծառայողներին, ընդգծեց այն միտքը, որ այսօրվա ծառայություն իրականացնողները իրենց հայրերի գործի արժանավոր շարունակողներն են, փառք ու պատիվ նրանց:

Խաղն ընթացավ շատ ջերմ ու բարեկամական մթնոլորտում: Թիմերը դրսևորեցին բավարար գիտելիքներ, չէ՞ որ զինվորի իմացական աշխարհի հարստությանը է պայմանավորված նրա ճիշտ ծառայությունը:

Հաղթեց «Բերդ» թիմը՝ 25 հնարավորից հավաքելով 20 միավոր: Բոլոր թիմերն էլ խրախուսվեցին գեղարվեստական գրքերով և Սուրբ զրքով: Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ԱրՊՀ ճարտարագիտական ֆակուլտետի ղեկան Գագիկ Բաղունցը, որն իր խոսքում կարևորեց զինվորի մարտական ոգին ու նվիրվածությունը մայր հայրենիքին: Այնուհետև թիմերի կազմով և բուհի ուսանողներով լուսանակարվեցին զոհվածների հիշատակին կանգնեցված խաչքար-հուշարձանի մոտ: Հենց այդ պահին էր, որ զորամասի հրամանատարներից մեկը՝ անձնագրեր ու փաստաթղթեր ձեռքին, դուրս եկավ բակ ու հրաման արձակեց՝ զորացրվածներ, շարքի՛:

Մեր առջև շարվեցին իրենց պարտքը հայրենիքի հանդեպ պատվով կատարած զինվորները՝ խաղաղ ժպիտը դեմքերին: Հուզիչ էր պահը. ծառայությունը շարունակող զինվորները մոտենում էին նրանց, ողջագուրվում՝ հոգու խորքում թերևս անթելելով այն մեծ կարողի կրակը, որ նրանք շուտով իրենց սիրելիների մոտ կլինեն, իսկ իրենք դեռ շարունակելու են ծառայությունը: Դժվար էր բացատրել այն զգացողությունը, որ այդ պահին ունեին զորացրվողները:

Այնուհետև զորամասի հրամանատար Է. Ասրյանը մեզ ծանոթացրեց զինվորների զորանցային պայմաններին. մաքուր, խնամքով հարդարված անկողիներ, հատուկ վահանակներ՝ «Ծխելը վնասակար է», «Իրավական անկյուն»,

նի հիշատակին, որը հետմահու արժանացավ կապիտանի կոչման ու պարգևատրվեց «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Երրորդն անմահացնում է ընկերների կյանքը անձնագրի փրկած հերոսի՝ Արմեն Հովհաննիսյանի հիշատակը: Հուշարձանի թևերից մեկին անմահության խոսքեր են փորագրված, մյուսին՝ Արմեն Հովհաննիսյանի մտքերը. «Բոլոր դիրքապահները թագավոր տղերք են: Աստված պահապան բոլոր զինվորների»:

Խուսմբը շրջում էր զորանոցի բակում, իսկ ես կանգնել-մնացել էի այդ փոքրիկ հուշարձանների առջև՝ մտքերով հերոսների մայրերի հետ: Թիկունքից լսում են մի զինվորի ձայն.

Ներքեցեք, ուզում եմ, որ իմ գրքի վրա Դուք մակագրեք: Սիրով վերցնում եմ գիրքը, բացում և մակագրում. ««Բերդ» թիմի հաղթող Արամ Սահակյանին». և պատրաստվում էի ամիս-ամսաթիվ գրել, երբ նա թե՛

Հենց Ձեր անուն-ազգանունը գրեցեք: Ես փորձում էի իմանալ տղայի



մտադրությունը, երբ նա շարունակեց.

-Ամբողջ խաղի ընթացքում ես անընդհատ Ձեզ էի նայում. այնքան նման եք տատիկիս...

Կարոտ ... ամեն ինչ անգոր է այս զգացումի դեմ: Դրա համար եկել-հասել էր հետևիցս ու արտահայտել իր խնդիրը:

Ես գրկեցի նրան, շոյեցի գլուխը ու հարցրի, թե ինչքան ժամանակ է ծառայում: Պարզվեց, որ մնացել է ընդամենը վեց ամիս: Թերևս դա էր ամենահուզիչ պահը այդ օրվա այցելության: Հազիվ խեղդելով հոգուս պոռթկումը՝ բարի ծառայություն ու բարի վերադարձ մաղթեցի նրան:

Մեր հաջորդ կանգառը մարտական դիրքերն էին, որ անձամբ զորամասի հրամանատար Էդիկ Ասրյանը ուղեկցեց մեզ: Այցելեցինք 128-րդ մարտական դիրքեր: Ուսանողուհիներն ավելի անհամբեր էին դարձել. ուզում էին ժամ առաջ ծանոթանալ մարտական դիրքերում զինվորների պարտականություններին:

Ճանապարհին հրամանատարը կանգնեցնում էր մեքենան, հարցնում մարտական հերթապահություն իրականացնող սպաների ու զինվորների ծառայությունից ու բարեկամաբար սեղմում նրանց ձեռքը:

Արդեն նախանշված դիրքում ենք: Խրամատի բազում ոլորաններով հասնում ենք դիտակետին: Մեկ-մեկ բարձրանալով՝ նայում էինք դիտակետով...

Որքան մոտ է թշնամին, ընդամենը մի քանի տասնյակ մետր: Որքան աչալրջություն ու զգոնություն է պահանջվում մեր դիրքապահ զինվորներից: Ծանոթանալով դիրքապահների պայմաններին՝ աղջիկները ինքնաձիգով, զինվորական գլխարկով լուսանկարվեցին նրանց հետ:

Նայում էի հերթապահող տղաների հպարտ դեմքին և հիշում մեր պատմությունը... Երբ հայրենիքի զինվորն իր թիկունքում կնոջ շունչն է զգում, ավելի ու ավելի է խանդավառվում: Ոչ մի ուժ չի կարող խախտել այդ երկրի անդորրը: Աղջիկներն էլ ավելի էին անուշացրել իրենց այցելությունը. տուփերով զանազան քաղցրավենիք էին բերել զինվորների համար:

Հրաժեշտ տալով դիրքապահներին՝ զորամասի հրամանատարը խոստացավ Նոր տարին դիմավորել հենց այդ մարտական դիրքում:

Երբ զորամաս վերադարձանք, ուսանողները նախընտրեցին ճաշել զինվորական ճաշարանում՝ զինվորի հետ կողք կողքի:

Այնուհետև զորամասի հրամանատարը պատվոգրերով պարգևատրեց դասախոսներին և մի խումբ ուսանողների, որոնք ձեռնարկել էին նման պատշաճ միջոցառում: Պարգևատրվողների մեջ էին Սելինե Դեղորոսյանը (ուսխորհրդի նախագահ, բանֆակ, 3-րդ կուրս), Մարինե Հարությունյանը (բանֆակ, 1-ին կուրս), Անուշ Առաքելյանը (աշխարհագրություն, 1-ին կուրս), Նաիրա Սարգսյանը (լրագրություն, 1-ին կուրս):

Վերջում, հրամանատարի կարգադրությամբ, նրա տեղակալ, փոխգնդապետ Արա Ավարթյանը ուսանողներին ուղեկցեց մարտական հրաձգարան, որտեղ էլ տղաներն ու աղջիկներն իրենց ունակությունները դրսևորեցին կրակային պատրաստությունից: Չէ՞ որ դա երբեք մեզ համար ավելորդ չէ: Երկրի պաշտպանության համար պարտավոր ենք բոլորս:

Հարուստ տպավորություններով բռնեցինք տունդարձի ճանապարհը՝ մտքերով ու ապրումներով, սակայն, դիրքապահ զինվորի ու սպայի հետ: Իմ ականջներում հրամանատարի խոսքերն էին. «Ցանկացած նման ոչ պաշտոնական այց զորամաս նոր լիցք ու թարմություն է հաղորդում զինվորական կյանքին»:

Եվ միշտ կանգուն է հայ զինվորը մարտադիրքում: Ոչ մի չար ուժ չի կարող խախտել մեր երկրի անդորրը:

Ուժ ու կորով քո բազկին, դիրքապահ զինվոր: Բարի ծառայություն ու բարի վերադարձ:

Մենք թիկունքից սատարում ենք քեզ, դու մենակ չես:

ՄԵՌՈՂԱԿԱՆ

ՄԻ ԴԱՍԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ...

«Աշակերտի գիտելիքներին մի փոքր կայծ տալու համար ուսուցիչն իր մեջ պետք է լույսի մի անբողջ ծով կուտակի»:

Սուխոմլինսկի

«Մեր զգայարանները, կամ այլ կերպ ասած՝ «մեր տեղեկատվական գործակալները», չեն կարող իրականացնել իրենց համաձայնեցված գործառնությունները, եթե չլինի մեր կենտրոնական նյարդային համակարգը: Մարդու գլխուղեղն է, որ կարողանում է կարգավորել նրա գործունեության որոշակի բնագավառներ՝ շնորհիվ զանազան մասնագիտացված կենտրոնների, որոնք գտնվում են գլխուղեղում: Այսինքն՝ գլխուղեղը հատուկ կառավարման կենտրոն է, որը իրահանգ է ուղարկում օրգաններին և կառավարում նրանց՝ աշխատանքը: Իսկ մեր օրգանիզմը մի մեքենա է, որ ենթարկվում է կենտրոնից ելող իրահանգներին, ասում է Լարենցը և վերջում ցուցափայտը:

Ցակն կամքը ավելի զորեղ է գտնվում, քան դաժան ճակատագիրը, և նա մինչև իր կյանքի վերջը պահպանում է ստեղծագործելու բացառիկ ընդունակությունն ու ցանկությունը:

Ահա այստեղ է, որ աշակերտների զարմացկոտ հայացքներն է տեսնում ուսուցչուհին՝ կապված այն տարակուսանքի հետ, թե ինչպես կարելի է ստեղծագործել, եթե մարդն ի գորու չէ լսելու: Բեթովենին այդպես էլ բախտ չվիճակվեց լսելու իր հրաշալի ստեղծագործությունը սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, սակայն այն լսելի էր միայն այն ժամանակ, երբ ինքն անձամբ էր կատարում իր շնամուրով: Այստեղ է, որ ուսուցչուհին նախապատվությունը տալիս է ոչ թե խոսքին, այլ փորձին, քանի որ ոչ մի կանոն ու խոսք այդպես չեն կարող սովորեցնել երեխային, որքան փորձերն ու ցուցադրությունները: Ուսուցիչ, աշակերտներից մեկին ընտրելով՝ ուսուցիչը առարկայի անվանումը:



Գպրոցում բաց դաս է: «Գլխուղեղի մասնագիտացված կենտրոնները կամ մեր տեղեկատվական գործակալները» այսպիսի խոսում վերնագիր էր կրում բաց դասը կենսաբանությունից, որը կազմակերպել էր Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ.1 միջնակարգ դպրոցի կենսաբանության ուսուցչուհի Վարդուհի Գովհաննիսյանը: Ինչպես ամեն մի դաս, առավել ևս բաց դասը դպրոցում մեթոդական աշխատանքի կազմակերպման կարևորագույն ձևերից մեկն է: Ի տարբերություն սովորական դասերի՝ բաց դասերը պահանջում են մեթոդական աշխատանքի որոշակի պատրաստվածություն: Այսօրվա ուսուցչի գերխնդիրն է՝ կարողանալ ապահովել ժամանակակից դպրոցին ներկայացվող օրավոր աճող պահանջները: Իսկ դասապրոցեսում ուսուցչին ներկայացվող հիմնական պահանջը դասի արդյունավետության բարձրացումն է, որը կարելի է իրականացնել՝ օգտագործելով տարբեր մեթոդներ ու հնարներ՝ դասերին տալով յուրահատուկ որակ: Ունենալով մեթոդական որոշակի նպատակ՝ ուսուցիչը ցանկանում է իր ցույց դնել ու ներկայացնել իր կողմից ընտրված դրական կամ նորարարական փորձը, մեթոդական գաղափարների յուրացումը, նոր մեթոդական ձևերի կիրառումը և ուսուցումը:

Եվ այսպես, դպրոցում բաց դաս է: Դասը սկսվում է աշակերտների վեճի տեսարանով, որտեղ երեխաներից յուրաքանչյուրը փորձում է իր անկաշկանդ ու համոզիչ խոսքով ընկերոջը համոզել, թե որ զգայարանն է կարևոր: Երեխաները դասի գրավիչ մուտքը թատերականացրել էին, որտեղ միմյանց հաջորդելով՝ տալիս էին զգայարանների կառուցվածքի, տեղադրության, անհրաժեշտության ու կարևորության մասին տեղեկատվություն:

ԳՌՄ աղյուսակի 1-ին և 2-րդ սյունակները լրացնելուց հետո երեխաներից յուրաքանչյուրը իր ցույց է դնում իր ունեցած գիտելիքները՝ տալով նախընտրած զգայարանի նկարագրությունը: Աշակերտների խոսքն ուղեկցվում է համապատասխան մուլյաժների ցուցադրությամբ: Երեխաները բավականին հետաքրքիր տեղեկություններ են ներկայացնում տեսողության, լսողության, մաշկամկանային, հոտառության, ճաշակելիքի զգայարանների մասին: Երբ երեխաները սկսեցին համոզիչ փաստարկներ բերել լսողության զգայարանի կարևորության մասին, ուսուցիչը միջամտեց և փորձեց ստեղծել պրոբլեմային իրավիճակ՝ աշակերտներին մտածելու հնարավորություն ընձեռելով: Մտածելով դասի կախվածումն մաս կազմող ցուցադրատառին՝ նա ցույց է տալիս դիտարժան մասուն փակցված Բեթովենի նկարը: Դրան հաջորդում է կենսագրական որոշ մանրամասնությունների նկարագրությունը, որն ուղեկցվում է կոմպոզիտորի հեղինակած «9-րդ սիմֆոնիայով»: Այն ստեղծելիս Բեթովենն այլևս չէր լսում...

Լինելով ձևով ազգային, իսկ բովանդակությամբ համամարդկային ստեղծագործություն՝ այն լավատեսության ու խանդավառության իսկական օրինակ է՝ հնչելով որպես պայքարի կոչ: Իր խոսքում ուսուցչուհին անդրադարձավ օթոսկերոզ հիվանդությանը, որի ժամանակ ներքին ակազնի 3 ոսկրիկները, պատվելով շարակցական հյուսվածքով, անշարժանում են, որն էլ առաջ է բերում խլություն: Սակայն Բեթովենի ստեղծագործական կամքը ավելի զորեղ է գտնվում, քան դաժան ճակատագիրը, և նա մինչև իր կյանքի վերջը պահպանում է ստեղծագործելու բացառիկ ընդունակությունն ու ցանկությունը:

Մարդկային անվանումը: Բավականին հետաքրքրաշարժ տեղեկություններ ներկայացվեցին կենդանիների զգայարանների կառուցվածքի և ընդհանրությունների մասին: Հատկապես ներկայացվեց կենդանիների (մեղու, ձի, կատու, շուն, աղվես, արծիվ, խլուրդ, նապաստակ և այլն) աչքերի կառուցվածքը՝ ելմանը մեթոդիկ, կատարող ֆունկցիայից: Դասին անդրադարձ կատարվեց հիգիենայի հետ կապված որոշ խնդիրների: Իր բնական կենսագործունեության արդյունքում մարդ կարողանա անհրաժեշտը մարդկային կառուցվածքից հեռացնել և անհրաժեշտը մարդկային կառուցվածքից հեռացնել: Դասին անդրադարձ կատարվեց հիգիենայի հետ կապված որոշ խնդիրների: Իր բնական կենսագործունեության արդյունքում մարդ կարողանա անհրաժեշտը մարդկային կառուցվածքից հեռացնել և անհրաժեշտը մարդկային կառուցվածքից հեռացնել:

Ամենակն էլ գաղտնիք չէ, որ երեխայի առողջությունը պայմանավորված է բազմաթիվ գործունեությամբ, որոնցից ոչ բոլորն են մեր կողմից կառավարելի, սակայն ամեն ինչ մեր կողմից կառավարելի է: Այսինքն, որպեսզի դրանց մի մասը չնպաստի երեխաների առողջության վատթարացմանը, մեր մեծերիս, առավել ևս ուսուցիչներիս իրավասություն է որոշակի գործունեությունների արգելադրումը: Արդի դարաշրջանը տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակաշրջան է, և նրա մաս են կազմում համակարգիչները, բջջային հեռախոսները՝ իրենց գեղեցիկ ակնհայտությամբ ու տարատեսակ կողմնակի սարքավորումներով: Իրենց բոլոր դրսևորումներով նրանք այսօր դարձել են սովորողների առօրյայի անբաժանելի մասը և կարող են լինել նրանց առողջությանը սպառնացող միջոց: Ուսուցիչ, մեր նպատակն է աշակերտության լայն խավերի միջավայրում ձևավորել գիտակցված վերաբերմունք սեփական առողջության պահպանման ու ամրապնդման նկատմամբ և դրանով նպաստել աճող սերունդի մտավոր ու հոգեկան վիճակի բարելավմանը, այդ թվում նաև՝ նրանց զարգացման հնարավորությունների մեծացմանը: Դասին ներկայացվեցին նաև վտանգավոր առարկաների, նյութերի, սննդիչի որոշ հավելումների մոնոլոգներ, համեմունքներ, չիպերի տեսակներ, զազավորված ըմպելիքներ, ծխախոտ, որոնց ամենօրյա անհեռապես գործածության արդյունքում անխուսափելի են զանազան վտանգավոր դրսևորումները: Այս ամենից զատ՝ չանտեսվեցին նաև մարմնի մաքրությանը վերաբերող կարևորագույն հարցերը, քանի որ առողջ ապրելակերպի սկզբունքներից է անձնական հիգիենայի կանոնների պահպանումը:

Դասի կշռադատման փուլի ժամանակ աշակերտներին հնարավորություն տրվեց լրացնելու ԳՌՄ աղյուսակի 3-րդ սյունակը և ամրապնդել իրենց գիտելիքները: Եզրափակելով նյութը՝ ուսուցիչը երեխաների ուշադրությանն արժանացրեց մի նոր մեթոդ, որը վերնագրված էր՝ «Մտորումներ կյանքի մասին»: Այն մանրամասնելուց հետո առանձին բարտերի միջոցով ամբողջացվեցին այն բոլոր վտանգավոր և անցանկալի երևույթները, որոնք այսօր տեղ են գտել դպրոցականների կյանքում և նրանց կյանքի անբաժանելի մաս են կազմում: Իրազեկվեցին, որ հատկապես դեռահասության շրջանում հարկավոր է զերծ մնալ մի շարք անցանկալի գործողություններից, որպեսզի «նախընտրելի ապագան» չվերածվի «հավանական ապագայի» (աղմկոտ-բարձր երաժշտություն՝ ականցակալներով, համակարգիչի օգտվելու կանոնների ոչ գրագետ պահպանում, ակնոցի սխալ ընտրություն, կարգալիս ոչ ճիշտ լուսավորության ապահովում...):

Առարկայի և կոնկրետ դասավանդվող նյութի նկատմամբ աշակերտների հետաքրքրությունների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ են տարավանդակ խաղեր: Ոչ մի դասնյութ հեշտ չի յուրացվի, եթե այն չուղեկցվի խաղով: Ահա այս դասի եզրափակիչ մասում էլ կատարվեց հետաքրքիր և ամրապնդող աշխատանք: «Սովորում ենք խաղալով», որն էլ ավելի դիտարժան դարձրեց օրվա թեման: Համապատասխան խաղ-քարտերի միջոցով իրականացվեցին. 1. աչքի հարմարման (ակոմոդացիայի դիտումը՝ խմբային աշխատանք), 2. երկակնյա տեսողությունը (խմբային աշխատանք),

Շնորհավորանք ԻՐ ԳՈՐԾԻ ԱՆԽՈՆՑ ՆԿԻՐՅԱԼԸ



14 տարի առաջ ճակատագիրը Արաքսյա Այվազյանին բերեց Քաշաթաղ: Առիթքնող արտաքինով, ազնիվ ու անսահման բարի այս կինը եկավ ու հաստատվեց Բերձորում, որը դարձավ իր երկրորդ հայրենիքը:

Շուրջ 15 տարի նա անմնացորդ նվիրումով ու ջնարող եռանդով աշխատում է ժողկրթաժամում՝ որպես առաջատար մասնագետ (հայոց լեզվի և գրականության գծով տեսուչ): Միաժամանակ դասավանդում է հ.2 դպրոցում:

Անանձնական սիրով նվիրված իր աշխատանքին՝ հավերժ անհանգիստ տիկին Արաքսյան (ավելի շատ այսպես են դիմում այս համեստ կնոջը) մեկ հեռավոր գյուղերից մեկի դպրոցում է, մեկ՝ Ստեփանակերտում կազմակերպվող միջոցառումներին ու ասմունքի մրցույթներին, մեկ՝ Բերձորում անցկացվող սեմինարներին:

Որտեղ էլ լինի նա, շռայլորեն բաշխում է իր գիտեցածը, փորձն ու խորհուրդները: Տիկին Արաքսյայի բարոյական ու անբասիր կերպարը օրինակ է շատ-շատերի համար: Նա իր վարքագծով կայելու է ուսուցիչների և աշխատակիցների համակրանքն ու սերը:

Այսօր արդեն 60-ամյա տիկին Արաքսյան նույն եռանդով շարունակում է իր սիրած գործը, որը բազմիցս գնահատվել է շրջակա կազմի կողմից, իսկ վերջերս կառավարության կողմից պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Շնորհավոր Ձեր տարեդարձը, սիրելի տիկին Արաքսյա: Ձեզ ցանկանում ենք առողջություն, աշխատանքային նորանոր հաջողություններ: Միշտ մնացեք կենսախիճ ու առույգ, կյանքով ու սիրով լի: Մենք հպարտ ենք, որ մեր կողքին եք՝ որպես խորհրդատու, մտերիմ ընկեր:

Այգեհովիտ գյուղի միջնակարգ դպրոցի կուլեկտիվ

3. տեսողական խաբկանք - (խմբային աշխատանք), հ/տ ռեսուրսներ,

4. «Սև արկղիկ» - (անհատական աշխատանք), որի ընթացքում մի քանի աշակերտի հնարավորություն տրվեց փակ աչքերով՝

ա) շրջափել առարկաները և որոշել դրանց ձևը, չափսը, ջերմաստիճանը, մակերևույթի վիճակը, բայց ոչ՝ գույնը,

բ) հոտոտելու միջոցով որոշել նյութի անվանումը (սուրճ, քացախ, յոդ, կիտրոն, խնձոր, սխորր),

5. բիբի աշխատանքի ստուգում (լույսի անմիջական ազդեցությունից բիբի լայնացում և նեղացում, խմբային աշխատանք),

6. ընտրված աշակերտը ակնհայտաբանելով լսում է իր նախընտրած երաժշտությունը, և այդ մեղեդու տակ պարում: Հետևելով երեխայի պարային շարժումներին՝ հանձնարարվում է գուշակել, թե ինչ երաժշտություն է լսում աշակերտը (կարելի է օգտագործել լուրդական խաբկանք):

Որպես վերջաբան՝ ավելացնենք, որ մասնատիպ դասերից հետո աշակերտները չեն կարող հետաքրքրվել դասախոսություններով, որոնք հոգևոր նոր սնունդ չեն տալիս նրանց մտքին, դասերի այն քննարկումները, որտեղ իրենք միայն լսողներ են: Այստեղ արդյունավետ են մանկավարժական այն մեթոդները միայն, որոնք ապահովում են որոշակի կարողությունների ձեռքբերումը, ինչպես և դաստիարակության այն պայմանները, որոնցում աշակերտները հնարավորություն են ունենում ինքնուրույն կերպով տիրապետել գիտության հիմունքներին, ձեռք բերելու նոր գիտելիքներ:

Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի բնագիտամաթեմատիկական մեթոդավարներ

ԵՐԱՆՏԱՎՈՐՆԵՐ

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՄԵՐ ՀՈՒՇԵՐՈՒՄ

(Ծննդյան 88-ամյակի առթիվ)

Մեր կյանքը հարուստ է ազգանվեր անհատներով, որոնք չքնաղ Արցախ աշխարհի պատմության անդաստանում թողել են իրենց հետագիծը, որոնց հետ մենք ժամանակին քայլել ենք, զրուցել, լսել նրանց գերող, համոզիչ խոսքը, մարդիկ, որոնք հարազատի մասն մտերմացել են, ուղեկցել մեզ, որոնք որքան պատմության գիրկն են անցնում, այնքան արդիական են դառնում իրենց իմաստավորված տարիներով, նրանց պատգամները ուղեկցել են դառնում՝ արժանանալով մեր երախտագիտությանն ու հիշողությանը:

Նման անհատականություն է Հայկ Խաչատրյանը՝ մանկավարժ, պատմավիպասան, լրագրող, հանրագիտակ, հասարակական գործիչ, Հուլիսի մանկավարժական ուսումնարանի 1944թ. շրջանավարտների աստղաբույլի ամենափայլուն սանը:

Հուլիսի մանկավարժական դարձավ Հայկ Խաչատրյանի հարազատ, մայրական գուրգուրանքով լցված լուսն կամարով օջախ, իմաստության ու խոհեմության դասերի, լուսավոր, պայծառ գաղափարների դարբնոց: Որպես գիտության լուսի ճամփորդ՝ նա ձևավորվեց և դարձավ հայրենի եզերքին արժանի քաղաքացի, հանրաճանաչ գրող, նվիրյալ ուսանող:

93-ամյա կրթությամբ տարիների հեռվից եղել է մտքի կամառ, հոգու թրծող հնոց, սովել շրջանավարտներ, որոնք յուրատեսակ հայելի են, գալիքին միտված այցեքարտ, որպես ջահակիրներ՝ կյանք են տարել ձեռք բերած գիտելիքներն ու բարության հունդերը, կրթանշակութային լավագույն ավանդույթները:

Բազում ընտանիքների համար հոգեհարազատ է Հուլիսի մանկավարժականը, որի բոլոր տարիների շրջանավարտները ձեռք են բերել բարության և մարդկային առաքինությունների դասերը՝ դառնալով արժանի մասնագետներ կյանքի բազմաթիվ ոլորտներում:

Հայոց քանքարների ուստան Հուլիսի Արսեն Խաչատրյանի գերդաստանի անունից պատիվ ունեն մերկայացնելու տնօրեն Արսեն և ուսանող Հայկ Խաչատրյանների անմնացորդ նվիրումներով փոխադարձ կապը:

Հայկ Խաչատրյանն անմար ցուլանք է Արսեն Խաչատրյան գերդաստանի անդամների հիշողությունների խորանում: Երջանիկ ենք, որ չփվել ենք ազնվություն ու բարություն սերմանող, հայրենասիրության ջահակիր, մարդկային քաղաքակրթության վաղնջական բնօրրան Արցախին, իր արցախցի ակունքներին, իր հայրենի լեռնաշխարհին նվիրված հրաշալի անհատականության հետ:

Թերթելով Հայկ Խաչատրյանի կյանքի պատմության էջերը՝ զգում ենք, որ նա վեհանձն ու ազնիվ արցախցի էր՝ գործը հիշողությամբ, յոթանասուն մարդու բաժին աշխատասիրությամբ, տաղանդով: Համեստ էր կենցաղում, աշխատավարձում, ընկերական, բարեմասնական շրջապատում: Նա քայլող հանրագիտարան էր:

Բայց նա չուզեց փառքի փոթորկուն ծովեր,

Նրա համար մի կաթիլ ցողն էլ ծով էր:

Հպարտությամբ պետք է մշել, որ Հ. Խաչատրյանը սովորել է Լեռնային Ղարաբաղի ուսուցիչների պատրաստման դարբնոց Հուլիսի մանկավարժական ուսումնարանում Հայրենական մեծ պատերազմի՝ 1942-44թթ. դժվար, դժնդակ տարիներին: Դահրավից ուսումնաստենչ շատ պատանիներ էին սովորում կրթօջախում: Նրանք գալիս էին ուսքով՝ պայուսակներում գրքեր ու ամբողջ շաբաթվա համար չոր հաց: Այդ տարիների տնօրեն Ա. Խաչատրյանի հիշողության մեջ մնացել էր վտիտ ու վեհերոտ շակը՝ ուսումնաստենչ, զրբասեր ուսանողը՝ բամբակ, խուհուն, խելոք հայացքով, գիտական-գեղարվեստական ելույթներով:

Նա հպարտանում էր, որ Հայկի գրական թռիչքի մեկնարկը՝ գրական արգասաբեր կյանքի գեղեցիկ շառավղի սկիզբն սկսվել է Հուլիսի մանկավարժականում:

1943թ. Հայկ Խաչատրյանը գրեց առաջին ստեղծագործությունը, որը տպագրվեց «Սովետական Ղարաբաղ» թերթում:

Հ. Խաչատրյանը թողել է հարուստ գրա-

կան ժառանգություն. 40-ից ավելի գրքեր, 14 պատմավեպ, 88 պատմավեպերի մտահղացում ունեն, որից 48-ի այուժեն արդեն պատրաստ էր: Ավա՛ղ, հայասեր, ազգապաշտ գրողի անժամանակ մահը (2001թ. հոկտեմբերի 10) կիսատ թողեց «բոլորիցս աշնան»՝ բեղուն ստեղծագործական շրջանը:

Հայկ Խաչատրյանի յուրաքանչյուր գրքի հրատարակություն երջանկահիշատակ Արսեն Խաչատրյանը ցնծությամբ էր ընդունում և հպարտանում:

Հատուկ ընծայագրերով լույս տեսած ամեն մի աշխատություն հեղինակն ուղարկում էր Ա. Խաչատրյանին:

Նրա առանձնատունը Հուլիսում դարձել էր մի յուրօրինակ վերնատուն, ուր գալիս էին մեծանուն հայորդիներ. գրողներ, գիտնականներ, հասարակական-քաղաքական գործիչներ Երևանից, Մոսկվայից, Սանկտ Պետերբուրգից՝ տեղեկանալու Հուլիսում ապրող հայերի մասին:

Հ. Խաչատրյանը նրանց խորհուրդ էր տալիս լինել հինավուրց Հուլիս քաղաքում և հանդիպել Արսեն Խաչատրյանին: Դրանցից են ակադեմիկոս Նիկոլայ Ենիկոլոպովը, Վևորգ Էմինը, Վարդգես Պետրոսյանը, Միքայել Հարությունյանը, Անժիկ Հակոբյանը, Արամայիս Սահակյանը, Արտաշես Պողոսյանը, Կարեն Յուզբաշյանը, Գալինա Ստարովոյ-Կուկան, Պավել Աղաջանովը (տիեզերագետ), Ալեքսեյ Հեքիմյանը, Արև Բաղդասարյանը, որոնց մտահոգում էին Հուլիսում բնակվող հայերի վիճակը, հայ կրթօջախների ճակատագիրը:

Հայկ Խաչատրյանը մարգարեի պես զգում էր արցախցիների՝ 1988-ի պոռթկումն ու հաղթանակի լույսի արշալույսը: Նա այդ տարիներին կապվում էր իր սիրելի տնօրենի հետ, տեղեկանում Հուլիսի հայերի վիճակով, սփոփում, կանխագուստ գալիք հաղթանակը:

Այդ տարիներին ազատագրական մարտի էին կանչում նրա սքանչելի պատմավեպերը, հողվածները, ակնարկները, նամակները: Նա դարձավ, իր արտահայտությամբ, չզորացրվող զինվոր Արցախյան գոյամարտի հերոսական պայքարում:

Նա հորդորում էր, որ արյան գնով ազատագրված հող հայրենին արիության և ոգու դարբնոց է, մեր ժողովրդի միասնության խորհրդանիշ, որի ամենամեծ արժեքն Արցախյան պայքարի ազատատենչ ոգու պահպանումն է, որի շնորհիվ մենք կկարողանանք վերականգնել պատմական արդարությունը՝ փրկելով մեր հայրենիքը կործանումից: Հենց դրա մեջ է Արցախյան պայքարի, հաղթանակի, զարգացման, կենսահաստատման հարստության գաղափարը:

1988թ. սեպտեմբերի 19-ին, երբ հայաթափվեց Հուլիս, խրախճանք ապրեցին թուրք ելուզակները:

Երկու օր հետո Հուլիսի մանկավարժական ուսումնարանի 1935թ. շրջանավարտ, անվանի գրող, արցախցի Բոգդան Ջանյանը «Գրական թերթում» գրեց. «Հուլիս» էլ Վան դարձավ՝ մեծածավալ հողվածը:

Հայկ Խաչատրյանն անմիջապես արձագանքեց, փնտրեց Հուլիսից բռնագաղթված, մազապուրծ փրկված տնօրենին, որն անասելի ծանր տարավ հայկական կոթողները՝ Ռեալական ուսումնարանը, Ղազանչեցոց եկեղեցին, Օրիորդաց Մարիամյան դպրոցը, ժամհայրանների հիվանդանոցը և հայկական չորս գերեզմանատները նորից որբացած թողնելը, բայց հոգու խորքում անթեղած պահելով ձգտումը, որ Հուլիսում պետք է հայն ապրի:

Հայկ Խաչատրյանը հուսադրեց իր ուսուցչին հաղթանակի շնչով, 1992-ի Մայիսի 9-ով, ազատագրված Հուլիսով, որը հոգու երջանիկ պոռթկումով դիմավորեց 80-ամյա Ա. Խաչատրյանը: Վերադարձվել գերդաստանով, կարողով համբուրեց Ռեալականի ու իր առանձնատան պատերն ու դռները: Անչափ ծանր տարավ՝ թուրքերի ձեռքով կրկին ավերակված քաղաքը տեսնելով:

Ձգաց ազատագրված քաղաքի, հայրենի տների, կրթօջախների, խաչքարակերտ աղբյուրների և ղողանջող եկեղեցիների վերականգնման անհրաժեշտությունը:

Իսկ Հուլիսի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցու զանգերի ղողանջները այդ օրերին ի լուր աշխարհի ավետում էին հինավուրց բերդա-

քաղաքի ընդմիշտ հայինը լինելու մշտնապահությունը, կրթամշակույթային փառքի վերականգնումը:



Երբ 1999թ. Հուլիսի մտավորականները, Արսեն Խաչատրյանի սաները, գործընկերները դիմեցին արժանին հատուցելու՝ կրթօջախը կոչել նրա անունով, առաջինն արձագանքեց մեծանուն ուսանողը՝ Հայկ Խաչատրյանը, որի բնորոշմամբ՝ Ա. Խաչատրյանի անունն անխաբիան կապված է Արցախի փառապանծ ուստան Հուլիս քաղաքի հայկական կյանքի տարեգրության հետ: Նա գրեց, որ 1939-1988թթ. դժմուկ ժամանակաշրջանում Հուլիսի հայկական դիմագիծը պահպանելու համար ոչ ոք այնքան ջանք ու եռանդ չի թափել, որքան Արսեն Խաչատրյանը: Ժամանակին նրան անվանել են Հուլիսի հայոց հայրիկ:

Նպատակային է նրա խնկելի անունն ու հիշատակը հավերժացնել՝ հունամիտար թուլեջ նրա անունով կոչելով:

Սեպտեմբերի 19-ին Հուլիսում (տնօրեն) և Հայկ (ուսանող) Խաչատրյանների փոխադարձ մտերմության, հարգանքի, բարեկամության կապի հարստությունը, որը պարտավոր ենք շարունակել ընդմիշտ:

2001թ. մանկավարժական ուսումնարանը (այժմ՝ թուլեջ) կրում է Արսեն Խաչատրյանի անունը:

Ամուր է Խաչատրյան գերդաստանի անդամների կապը նրա անունը կրող կրթօջախի կողմնակիցի հետ:

Անվանի ուսուցչապետի ավագ որդին է ԼԳՀ վաստակավոր մանկավարժ Ալբերտ Խաչատրյանը, որը 1962-2009թթ. անընդմեջ աշխատել է նախ՝ մանկավարժության և հոգեբանության դասախոս, ապա՝ տնօրեն:

Տոբերիս հեղինակը՝ որպես մայրենի լեզվի և գրականության դասախոս, աշխատել է 1967-2008թթ.:

Մեր համեստ ներդրումն ենք ունեցել մանկավարժական ուսումնարանի վեհ ու պատվաբեր ողջ գործընթացում:

Կյանքը միշտ վարձահատույց է լինում նրանց, ովքեր գիտեն անմնացորդ նվիրվել:

Հայկ Խաչատրյանն անմնացորդ նվիրումն էր համար արժանի է ամենայն մեծ գնահատանքի, քանզի նա կա հայի բոլոր հյուլեներին մեջ իր ծնված օրից մինչև մահ՝ բուռ առ բուռ, պտղունց-պտղունց տալով նրա դժվար պահերին ու լուսաշող ապագային իր հոգու կրակը:

Ուստի, նման գնահատումը շատ նպատակային է, որը հաստատում է մեծանուն գրողի, լավագույն արցախցու նկատմամբ մեր երախտագիտությունն ու գնահատման չափանիշը:

Այդ, Հ. Խաչատրյանի անունն իր արժանի տեղը պետք է գրավի Արցախի գրական անդաստանի մշտավառ քուրայի հարուստ տարեգրության մեջ:

Թեև անժամանակ մահը անավարտ թողեց նշանավոր գրողի մտահղացումները, բայց դրանք հավերժ բոցկլտում են տիկին Ժենյայի, Խաչատրյանի զավակների, բարեկամների, ընկերների սրտերում:

Տիկին Ժենյայի՝ տարիներով հավաքած հուշերում, եղբոր սուրբ մասունք դարձած գրքերի մեջ զգում ենք լավագույն հայուհու նվիրված, ընտանեկան, քույրական մշտավառ ջերմությունը, վեհ հայրենասիրությունը, մարդկային կյանքի հավերժության մաքրամաքուր հոգու աղոթքը:

Մեծագույն պատկառանք՝ Հայկ Խաչատրյան ֆեմինիստ առկայծող հուրը մշտավառ պահողներին: Անվանի արցախցու մեծարման յուրաքանչյուր դրսևորում թող նրա անմար հիշատակի պահպանման վառ դաս լինի հետագա սերունդներին:

Լարիսա ՂԱԶԱՐՅԱՆ
ԼԳՀ վաստակավոր
մանկավարժ, թռչակառու

ԴԻՄԱԳՐԱՎԵՆԵ ԲՆՈՒԹՅԱՆ ԱՐՉԱՎԻՐՔԸ

Լրացավ Սպիտակի երկրաշարժի 26 տարին: Երկրաշարժ, որը ցնցեց ողջ աշխարհը: Բոլոր կողմերից գթառատ մարդիկ իրենց ձեռքը մեկնեցին՝ օգնելու հայ ժողովրդին:

Երկրաշարժերը բնական երևույթներ են, որոնց առաջացումը մենք չենք կարող կանխատեսել, առավել ևս՝ կանխել: Իսկ ինչպես մշուս են աշխարհի առաջատար փորձագետները, 21-րդ դարում ուրբանիզացման և երկրի բնակչության թվաքանակի աճով պայմանավորված՝ բնական և տեխնածին աղետները կատանան ավելի հաճախակի, ավերիչ և մասշտաբային բնույթ: Դա առավել ողբերգականորեն կդրսևորվի ուժեղ երկրաշարժերի ժամանակ:

Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գտնվում են երկրաշարժավտանգ գոտում:

1988 թ. դառը փորձից էլնելով՝ 1991 թ. ՀՀ-ում մշակվել և իրականացվում է սեյսմիկ ռիսկի նվազեցման քաղաքականություն, ընդունվել են պետական ծրագրեր և «Սեյսմիկ պաշտպանության մասին» օրենք:

2000թ. դեկտեմբերին ԼԳՀ կառավարության որոշմամբ՝ ընդունվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագիրը», իսկ 2002թ. դեկտեմբերին՝ «Սեյսմիկ պաշտպանության մասին» ԼԳՀ օրենքը:

Այդ բոլոր փաստաթղթերում, ի թիվս այլոց, ընդգծվում է նաև բնակչության իրազեկվածության գործնի կարևորությունը հասարակության և պետության սեյսմիկ պաշտպանության տեսակետից: Ուրեմն, քանի դեռ հնարավոր չէ կանխատեսել երկրաշարժը, հարկավոր է սովորել ներդաշնակ ապրել բնության հետ:

Ըստ Գյոգոյի գործողությունների ծրագրի՝ (ընդունվել է 2005 թ. ճապոնիայի Գյոգո նահանգի Կոբե քաղաքում տեղի ունեցած Աղետների ռիսկերի համաշխարհային համաժողովի ժամանակ), աղետների ժամանակ ամենից խցելին բնակչությունն է, իսկ երեխաները հատուկ խցելի խումբ են: Դրա համար էլ երկրաշարժերից պաշտպանվելու վարքականությունների ուսուցումը պետք է սկսել ամենակրտսեր տարիքից՝ նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաներից:

ԼԳՀ-ում Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայության բնակչության հետ տարվող աշխատանքների բաժինը ուսումնական պարագամունքներ է անցկացնում բնակչության լայն խավերի շրջանում՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրտսեր և դպրոցահասակ երեխաներին: Համաձայն ԼԳՀ կրթության և գիտության նախարարի հրամանի՝ հանրապետության բոլոր դպրոցներում, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում «Երկաշարժ: Երկրաշարժից պաշտպանվելու վարքականությունները» թեմայով 4-ժամյա և 6-ժամյա ծրագրերով դասընթացներ են մտցվել 7-րդ դասարանում աշխարհագրություն առարկային տրամադրված դասաժամերի շրջանակներում: Իսկ Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի կողմից ներկայացված ժամանակացույցի համաձայն՝ յուրաքանչյուր տարի մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանի աշակերտները ուսուցիչների հետ այցելում են մեր ծառայություն, տեղում անց կացվում ուսուցում, և դպրոցականները ծանոթանում են բոլոր բաժինների գործունեությանը:

Ուսուցումներից զատ ծառայության օժանդակությամբ մայրաքաղաքի դպրոցներում դասավանդող ուսուցիչների ջանքերով կազմակերպվում են միջոցառումներ՝ բնական աղետներից պաշտպանվելու թեմայով: Այս տարի նման միջոցառումներ կազմակերպվեցին Ստեփանակերտի հ. 2 և հ. 7 դպրոցներում: Սպիտակի երկրաշարժի 26-րդ տարելիցի նախօրյակին:

Միջոցառումներին ներկա էին դպրոցականներ, ուսուցիչներ, հյուրեր ուրիշ դպրոցներից, քաղաքապետարանի կրթության բաժնից, Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայությունից: Միջոցառումները կազմակերպված էին բարձր մակարդակով:

ԱՅՆԱԶԱՆ

ՀՈՒՍԱՆՔ ՈՒ ՀԱՎԱՏԱՆՔ

Դահլիճի խաղաղ լուսությունը շատ բան էր հուշում: Ջգացվում էր, որ բեմից հնչող խոսքը հետաքրքրում էր բոլորին: Ու սա ամենակին էլ զարմանալի չէր, քանզի սովորական, առօրեական խոսքն այդ ինչ-որ տեղ հուզական մեծ երանգ ուներ, որի համդեպ հանդիսատեսը անտարբեր մնալիս կարող էր հեղինակը կետին էր խփել, ու ամբողջ պիեսը շնչում էր հայրենասիրությամբ՝ սկզբից մինչև վերջ, առաջին պատկերից մինչև «հաղթական ավարտը»:

Եվ այս ամենը այնքան ընդգծված, որ դու, դերասանի խաղով, ամեն մի շարժումով տարված լինելով համոզված, մտքումդ ակամայից մեծերից մեկի՝ Դեմիրճյանի իմաստուն բառերն են շնջում: «Ոչ մի հարստություն, փառահեղ կյանք, ոչ մի պատիվ ու փառք հայրենիք չարժեն: Հայրենիքը ամեն բանից բարձր է, և նրա գինը չի չափվի ոչ մի աշխարհային գանձով»: Այս եզրակացությանն են հանգում պիեսը (Վարդգես Բաղդյան, «Ես մնում եմ») դիտելուց հետո: Այսպես է, բանի որ արժարժված թեման արդիական է, մոտ ու հարազատ՝ բոլորի սրտին:

Մատաղ սերնդի հայեցի դաստիարակություն, շիտակություն, ազնվություն, հոգու մաքրություն,

նվիրվածություն հայրենի հողին, հայրական օջախին... Այս ամենը խտացված է պիեսում, որը ոչ միայն ժամանակակից է, այլև ժամանակը իր մեջ ամփոփոխ, մեր հույզերից, մտորումներից, մեր մտահոգություններից, երազանքներից ու սրտերից բխող: Ես ավելի քան համոզված եմ, որ պիեսը հաճելի անակնկալ է ոչ միայն գրողի, նկարչի, երգահանի, արվեստի աշխատողի, այլև

ոնիդ Հայրությունյանի ջանքերի շնորհիվ, որը ինչպես խոստովանում է, ամեն մի ներկայացում բեմ բարձրացնելուց առաջ անջուն գիշերներ է անցկացնում, օրերով, ժամերով խորհում, մտածում ու ինչ դեր կարելի է հանձնարարել՝ հաշվի առնելով բնավորությունը, ունակությունը, բեմական արվեստի հետ ունեցած առնչությունը: Հիշեցնեմ, որ նրա անսպառ եռանդի, ամենացորդ նվիրումի շնորհիվ ստեղծվել է կուռ ու համերաշխ մի կոլեկտիվ, որի համար թատրոնի շահը, հարգը ու պատիվը բարձր են ամեն ինչից, իսկ ստեղծագործ մթնոլորտի պահպանումը ազնիվ նպատակ է ու գերխնդիր:

«Ես մնում եմ» թատերական երկը, հիրավի, ուսանելի շատ բան ունի և արժանի է գնահատանքի ու պատշաճ ուշադրության:

Հայրենիքը բանկ է ամեն ինչից (Ալիշանի խոսքը հիշեցնեմ. «Հայրենյաց քարերն ավելի տաք են, քան Բաբելոնի փռերը»), ու մեզանից ամեն մեկը պարտավոր է ազնվորեն ծառայել հայրենիքին, պահել-պահպանել նրա ամեն մի ծառն ու թուփը, հարգել Արցախ աշխարհի, հայրենի հողի ազատության ու անկախության համար զոհված մեր արծիվ տղաների հուշը ու հիշատակը, հավատարիմ մնալ դարերից եկած մեր ազգային ավան-

դույթներին, սովորույթներին: Ահա թե ինչ է ուսուցանում ուշագրավ այս բեմադրությունը: Ու ինձ թվում է՝ սա չափի մնալով Ստեփանակերտի մշակույթի ու երիտասարդության պալատի պատերի ներսում: Կարելի է ու լավ կլինի բեմադրել նաև հանրապետության գյուղերում, Պաշտպանության բանակի առանձին գործնասերում, մի բան, որը զգալիորեն կնպաստի, կօգնի հայ մարդուն՝ սթափ հայացքով նայելու աշխարհին, կյանքին ու հարազատ օջախը լքելուց առաջ նորից ու դարձյալ խորհելու, կշռադատելու, ինքն իրեն հարցնելու՝ արդյո՞ք ճիշտ եմ վարվում ես... Պիեսի հիմքում էլ հենց այս գաղափարն է ընկած:

Ոչ ոք, իհարկե, այն միամիտ կարծիքին չէ, որ Ամերիկա, Ֆրանսիա, արտերկրի զնալու մտադրություն ունեցող երիտասարդը այս ներկայացումը դիտելուց հետո կարող է փութաբանորեն գնալ տուն ու մի կողմ դնել նախօրոք պատրաստած ճամփորդական պայուսակը, բայց որ տասից զոռն մեկը կարող է միտքը փոխել, ոտքը կայս օգել ու որոշ ժամանակ անց ետ կանգնել ընդունած որոշումից՝ հուսանք, որ այդպես կլինի:

Միջալե ԲԱԼՅԱՆ
Թշակառու ուսուցիչ,
20-րդ դարի Արցախի
լավագույն մանկավարժ

ԵՎԻՐՎԱԾ
ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ
100-ԱՄՅԱԿԻՆ

Ծուռ աշխարհում շիտակ ապրելը ամենադժվար գործն է:

Յ.Սահյան

Հոկտեմբերի 14-ին Ուխտաձորի Ա.Սկրտչյանի անվան միջնակարգ դպրոցում անցկացվեց Յ.Սահյանի 100-ամյակին նվիրված միջոցառում: Այն կազմակերպել էր դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անժելիկա Մնացականյանը: Չմայած երկար տարիների աշխատանքային փորձ չունենալուն՝ երիտասարդ ուսուցչուհին կարողացավ մեզ բոլորիս տեղափոխել սահյանական աշխարհ: Դասարանը, ուր անց էր կացրել միջոցառումը, կահավորել էր շատ գեղեցիկ, պատրաստել էր տարբեր պատի թերթեր՝ նվիրված Սահյանին: Միջոցառումն էլ ավելի էր գեղեցկացնում կրակոտ ու կրքոտ մասերն ու թուփը:

Ուսուցչուհին մեղմ երաժշտության ներքո նուրբ ու քնքուշ ձայնով ներկայացրեց գրողի կյանքն ու գրական գործունեությունը, իսկ աշակերտները արտասանեցին նրա լավագույն բանաստեղծությունները: Տղաները բեմականացրին նրա կյանքից կարևոր և ծիծաղաշարժ դրվագներ:

Երկաներս մտովի տեղափոխվել էինք բնության գիրկը, ուր երգում էր քարափը, ժպտում էր մասրենին, խոսում էին հողը, ջուրը...

Անչափ հաճելի էր լսել մեծ բանաստեղծի խոսքը: Վայելեցինք նաև երգերի վերածված նրա բանաստեղծություններից մի քանիսը:

Հոգիս ավելածվեց, երբ աշակերտները կատարեցին «Ախր ես ինչպես» երգը: Միջոցառումն ավարտվեց հենց այդ երգով: Մենք բոլորս հեռացանք՝ հոգևոր սնունդ ստացած, և մեզ հետ տարանք մեծ բանաստեղծի խոսքն ու խրատը, մասրենու հմայքն ու հողի բերկրանքը:

ԽՈՍՔ
ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Այս կամ այն գրողի կյանքն ուսուցանելիս միշտ էլ ցանկացել եմ ավելից տալ աշակերտներին, սակայն աղբյուրները քիչ են, մանավանդ մայրաքաղաքից հեռու բնակավայրում, ինչպիսին մեր գյուղն է: Իսկ բավարարվել միայն դասագրքով, չափից շատ է քիչ, մանավանդ, որ ինձ հետաքրքրող հարցերի պատասխանները շատ հազվադեպ են հանդիպում դասագրքերում: Ճիշտ է, դպրոցում ունենք շատ գրքեր, ունենք նաև գրողների բոլոր ստեղծագործությունները, սակայն դրանք բավարար չեն գրողի կենսագրությունը լիարժեք ուսումնասիրելու համար:

Լինելով հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ չեմ ուզում տարբերություն դնել գրողների միջև, բայց և չեմ կարող չասել, որ կան գրողներ, որոնց հանդեպ իմ սերը անսահման է:

Այդպիսով Պարույր Սևակ հանճարի բանաստեղծություններով՝ տարիների ընթացքում այնքան հարցեր էին կուտակվել իմ մեջ, որոնց պատասխանները չէի գտնում կամ էլ գտնում էի, բայց թերություններով:

Վերջերս գործընկերուհիներիցս մեկը ինձ պարզեց Անուշ Սարույանի «Պարույր Սևակ» գիրքը: Ուրախությանս չափ չկար: Մի գիշերվա մեջ ստացա իմ բոլոր հարցերի պատասխանները, ինչի համար ես իմ շնորհակալությունն են հայտնում Անուշ Սարույանին:

Նման գրքերի կարիքը, անկասկած, շատ է գգում այսօրվա ուսուցիչը:

Սյուզաննա ՂԱՐԱՅԱՆ
Հարդուլի շրջ. Ուխտաձորի
Ա.Սկրտչյանի անվ. միջն. դպրոցի
հ.լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԴԻՄԱԳՐԱՎԵՆԵ ԲՆՈՒԹՅԱՆ ԱՐԶԱՎԻՐԸ

7 Է Աշակերտները մեզ գոհացրին իրենց ելույթներով և բավարար գիտելիքներ ցուցաբերեցին երկրաշարժի և նրանից պաշտպանվելու վարքականոցներից: «Դիմագրավենք արհավիրքը բնության» թեմայով միջոցառումների մեջ ընդգրկված էին նյութեր Սպիտակի երկրաշարժի, բնական այլ աղետների, երկրաշարժից պաշտպանվելու վարքականոցների մասին: Տխուր մեղեդու ելևէջերի տակ ցուցադրվեց աղջիկների խմբապար:

Շնորհակալություն հ.2 և հ.7 դպրոցների աշխարհագրության ուսուցչուհիներ Լուսինե Մելքունյանին և Ալինա Բեգլարյանին, մեր սիրելի դպրոցականներին՝ այդպիսի հետաքրքիր և բարձր մակարդակով կազմակերպված միջոցառումների համար:

Ծառայության կողմից նախատեսված ենք բնական և մարդածին աղետների և դրանցից

պաշտպանվելու վարքականոցների վերաբերյալ միջոցառումներ կազմակերպել մայրաքաղաքի և շրջակայքի մյուս դպրոցներում: Սեյսմապաշտպան վարքականոցների ուսուցում անցկացնելով և բնական աղետների վերաբերյալ միջոցառումներ կազմակերպելով նախադպրոցական և դպրոցական համակարգում՝ մենք մեր երեխաներին ոչ միայն կնախապատրաստենք դիմակայելու աղետներին, այլև կօգնենք հաղթահարելու սթրեսները և խուսափելու դրանց բացասական հետևանքներից:

Սեյսմիկ պաշտպանության ծառայության կողմից միջոցներ են ձեռնարկվում նախադպրոցական ու դպրոցական հաստատություններին աղետների ռիսկերի նվազեցմանը նվիրված գրականությամբ ապահովելու ուղղությամբ: Որոշակի նյութեր արդեն տրա-

մադրվել են Ստեփանակերտի մանկապարտեզներին, նախապատրաստում ենք ձեռնարկներ՝ դպրոցներին տրամադրելու համար:

Դպրոցներում անցկացված միջոցառումների վերջում Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայության գործադիր տնօրենի կողմից երկու դպրոցներին էլ տրամադրվեցին գրքեր՝ աղետների ռիսկերի նվազեցման կրթության վերաբերյալ, որոնք կօգնեն ուսուցիչներին, դասղեկներին աղետների մասին դասեր անցկացնելու ժամանակ:

Հայկանուշ ԵՍԱՅԱՆ
ՀՀ ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության արևելյան ծառայության բնակչության հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչ

«Լուսարար»-ի փոստից

Մի առիթով գյուղի տարբեր թաղամասերից հավաքվել էինք սեղանի շուրջ: Խոսում էինք անշնորհ վարորդից, նրա ցինիկ պահվածքից: Եվ ակամա բոլորը հիշեցին մի ուրիշ վարորդի շնորհալի վերաբերմունքը: Մարդ, որին են նույնպես տարբեր հարցերով Սոս-Ստեփանակերտ ճանապարհին առնչվել են որպես ուղևոր, կամ խնդրանքով՝ ծանրոց ուղարկել քաղաք հարազատներին, կամ դեղորայք բերել քաղաքից: Ցանկացած խնդրանքի նա մոտենում է բարյացակամորեն ու անպայման ձգտում է կատարել:

Այսպես գրուցակիցներս մեկը մյուսի խոսքը շարունակելով, գո-

հունակությամբ ու բարի մաղթանքներով պատմում են. որը իր ուսանող երեխային է ծանրոց ուղարկում, որը՝ թոթապանակ, որը պատվեր է տալիս, թե ինչ բերի իրեն քաղաքից, և այլև...

Եվ այս ամենը սիրով կատարող Սոս-Ստեփանակերտ մարդատարի վարորդ, համագյուղացի Գեղամ Գասպարյանն է:

Գեղամը վայելում է Սոս-Մաճկալաշեն և մինչև Ստեփանակերտ հասնելու ճանապարհին մոտակա գյուղերից եկող ուղևորների, ուսանողների սերն ու հարգանքը: Ես ինքս բազմիցս ակամատես եմ եղել, թե ինչպես է Գեղամը սոցիալապես անկարող ընտանիքներին

սատարելու համար նրանց օգնության ձեռք մեկնում՝ որոշ գյուղատնտեսական մթերքներ քաղաք հասցնելով՝ առանց ուղեվարձ գանձելու: Նման օրինակները շատ են, որոնք էլ ակնածանք են ծնունդ Գեղամի անձի հանդեպ:

Ոչ մեկս չի հիշում դեպք, որ նրա մեքենան մնա կես ճանապարհին, քանզի մաքրամաքուր վարորդը իր մեքենայի տեխսպասարկումը նույնպես կատարում է խնամքով ու ճիշտ ժամանակին:

Ինչքան հաճելի է, երբ մարդը բարի է, խելոք, կուլտուրական և մեծի հարգը իմացող: Անչափ շնորհակալ եմ:

Շուտով նրա ծննդյան տարե-

դարձն է: Շնորհավոր ծնունդդ, հարգելի Գեղամ, ցանկանում ենք թեզ քաջառողջություն, երջանկություն և անխափան երթևեկություն:

Մի խոսք ստեղծիչների կողմից
Ուզումեա ԻՍԱԽԱՆՅԱՆ

Հ.Գ.-Քանի որ գյուղում գործող հոգևոր սնունդի աղբյուրը միայն դպրոցն է, և նյութիս հերոսը շատ է կապված աշակերտների, ուսանողների հետ, նաև իր ընտանիքի անդամները մանկավարժներ են, ուսուցիչ, հարմար գտա թղթակցությունս ուղարկել «Լուսարարին»:

ԼՈՒՍԱՐԱՐ
Ի ՏԵՂ ԽՍՐԱԳՐԻ՝
Կ. ՊԱՐԻԵԼՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեքենաների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3140: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 15.12.2014թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: